

ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

DIEGHIEGAIDOU

ديغيجادو

Հրատարակութիւն Գահիրէի ՀԲԸՄ-ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՍՐԱԳԻՐ
Մարուշ Երամեան

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԱՏՈՒ
Մարտիկ Պալեան

ՍՐԱԳՐԻՉ
ՎԵՐՍՏՈՒԳԻՉ
Անայիս Ճիգմեճեան

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ
ՁԵՒԱՌՐՈՒՄ
Շահե Լուսարարեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Digital

Գափրեի ՀԲԸՄ-ի
լուրերուն հետեւեցէք
www.agbuegypt.com
կայքէջով:

Ծանօթացէք «Հայաստան
էւ Հայերը Արաբական
Սամուլին մէջ. 1876-1923»
հաւաքածոյի նիւթերուն
www.arminmedia.com
կայքէջով:

«Տեղեկատու»ի յօդուածա-
գիրներուն արտայայտած
կարծիքները անպայման-
օրէն չեն ներկայացներ
Գափրեի ՀԲԸՄի պաշտո-
նական տեսակէտները:

ԹԻԻ 116 ՆՈՐ ՇՐՋԱՆ,
ՅՈՒԼԻՍ 2025

Խմբագրական Մտորումներ 1

ՀԲԸՄի Կեդրոնական
Վարչութեան Յայտարարութիւնը 2

Կրկին Փառատօն
Անժիկ Կանիմեան 3

Հելիոպոլիս 120 5

Կրթութիւն եւ Ինքնութեան կազմաւորում 6

Գրիչ 7

Ալին Գութանի Համերգը 8

«Կեանքիս Մաշրապիան» 9

Մեր հանդիպումները՝ Սարգիս Մանուկեան 10

«Կարելի՞ է Արեւմտահայերէնը Փրկել» 14

Նամակ Խառատեանէն Պ. Թերզեանին 15

Գործն է Անմահ
Անժիկ Կանիմեան 16

Սարուխան Սփիւքի Մասին 18

Ո՞վ է Մեղաւոր
Սօսի Ներքետեան-Յակոբեան 19

Սարգիս Տեմիրճեանի Մահը 21

Մահ Տիգրան Ծուլիկեանի 24

Սարուխանի Արխիւը «ԳԱԹ»ի Նուիրուած 25

Կարճ լուրեր 26

«ՀԲԸՄիութեան Հայրենական Գործունէութիւնը
1991-2021 Տարիներուն (ակնարկ)» 29

Պասքէթի մրցաշարք
Սօսի Ներքետեան-Յակոբեան 30

Շնորհակալութիւն 32



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Ամեն անգամ, որ համաշխարհային նոր աղետ մը տեղի ունենայ, որքան ալ հեռու ըլլայ այդ աղետը մեր ապրած երկիրներէն, նորէն ալ մեր այնքան դժուարութեամբ ձեռք բերուած ներքին խաղաղութիւնը կը խախտի, որովհետեւ գիտենք, թէ մանաւանդ վերջերս «թիթեռներու ազդեցութիւն»ը (butterfly effect) իր դերը ունի, այլ խօսքով՝ ամէն միջազգային երեւոյթ առնչուած է այլ երեւոյթներու եւ անպայման իր հետեւանքները պիտի ունենայ մօտ թէ հեռու երկիրներու վրայ:

Այսպէս է, որ տակաւին Կազայի ողբերգութիւնը չաւարտած, նոր ողբերգութիւն մը՝ Իրան-Իսրայէլ պատերազմը կը սկսի, սպառնալով իր հետ այրել ամբողջ Միջին Արեւելքը: Եւ ինչ որ տասնամեակներու, նոյնիսկ դարերու ընթացքին կառուցուեր է, մէկ րոպէի մէջ կ'ոչնչանայ:

Մարդկութիւնը կրկին ահաւոր կերպով կը զգայ իր անկարողութիւնը բան մը ընելու, բան մը փոխելու այսօրուան դէպքերէն: Կար ատեն, երբ ժողովուրդը իր խօսքը ունէր եւ ունէր միջոցները այդ խօսքը պարտադրելու: Այսօր փոխուած է կացութիւնը դժբախտաբար:

Այս անկարողութիւնը խորունկ կերպով կը ջլատէ մեզ, երբ ականատես կը դառնանք մեր հայրենիքին մէջ քակուող դէպքերուն, զորս հեռուէն կը դիտենք, եւ ունենալով պէտք եղած միջոցը՝ հաւանական հետեւանքները նաեւ կ'ուրուագծուին մեզի համար...

Բարեբախտաբար սակայն գաղութս կը շարունակէ իր սովորական առօրեան ապրիլ, շարունակելով իր աշխատանքն ու ձեռնարկները:

Թէեւ բարեբախտութիւն է, որ ամառուան շրջանին ականատես եղանք հինգ պսակներու, հինգ զոյգերու նոր ընտանիքներ կազմելուն, դժբախտաբար սա-

կայն այս հինգէն չորսը օտար ամուսնութիւններ կնքեցին... Բայց անոնց պսակը թերեւս նաեւ խոստում մըն է բազմացնելու գաղութին նուազող թիւը: Բարիք եւ արեւշատութիւն կը մաղթենք մեր բոլոր նորապսակներուն:

Գաղութը ականատես եղաւ նաեւ դասական գեղեցիկ համերգի մը, Գանատայէն հրաւիրուած սօփրանօ Ալին Գութանի կատարմամբ:

Նմանապէս ականատես եղանք մեր դպրոցին միջնակարգի եւ երկրորդականի աւարտական դասարաններու աշակերտներուն յաջողութեան, որ մեզ հպարտութեամբ կը լեցնէ:

Կը շարունակուին Սարուխանի ծննդեան 125-ամեակին նուիրուած ձեռնարկներն ու հանդիսութիւնները, այս անգամ Աղեքսանդրիոյ մէջ:

Խմբագրութիւնս ունեցած է երկու հիւրեր՝ Սարգիս Մանուկեան, որ կու գար Աւստրալիայէն եւ խմբագիրն է Սիտնիի ՀԲԸՄիութեան «Միութիւն» պարբերականին, եւ Վահէ Պօղոսեան, որ կը շարունակէ իր ուսումնասիրութիւնները Սուտանահայ գաղութին մասին, «Վ. Ճիզմէճեան արխիւասրահ»էն ներս:

Ի տարբերութիւն այլ շրջաններու, այս եռամսեակը ականատես եղաւ Յուսաբեր ակումբէն ներս գաղութիս նախկին անդամներէն արդէն երեք գիրքերու հեղինակ (արաբերէն լեզուով) Թովմաս Կորկիսեանի վերջերս լոյս տեսած գիրքին շնորհանդեսին:

Յունիսի կէսերէն արդէն ամառը մեծաքայլ եկած է քաղաքս. բարի, խաղաղ եւ հաճելի արձակուրդ կը մաղթենք բոլորին, եւ վայելք, Եգիպտոսի գեղեցիկ ծովափերուն վրայ:



ՀԲԸՄ-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱԴԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Հայ ազգը խոր տագնապի պահու մը մէջ կը գտնուի: Հայաստանի վերջին իրադարձութիւնները ցնցումի ալիքներ կը յառաջացնեն Հայաստանի մէջ եւ Սփիւռքի լայն տարածքին: Ինչպէս մեր ազգի պատմութեան բախտորոշ բոլոր հանգրուաններուն, ՀԲԸՄ-ը իր ծայնը կը բարձրացնէ կոչ ուղղելով զսպուածութեան եւ ազգային միասնականութեան:

Մինչ դէպքերը կը զարգանան, կարելոր է վերահաստատել, թէ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութիւնը եւ ժողովրդավարական գործընթացը պէտք է յարգուին, այնպէս ինչպէս համաշխարհային հետեւորդներ ունեցող մեր Ազգային Եկեղեցիին յստակ վարչակարգը, օրէնքները եւ կանոնագրութիւնը:

Կառավարութեան առաջնային իրաւունքները եւ պարտաւորութիւնները Հայաստանի մէջ, կը վերաբերին կառավարչական քաղաքականութեան պահպանումին եւ օրէնքներու գործադրումին, ժողովրդավարական գործընթացի եւ ազատ խօսքի անհատի իրաւունքներու սահմաններուն մէջ: Միաժամանակ, Եկեղեցւոյ իրաւունքները եւ պարտաւորութիւնները կը վերաբերին Արեւելքէն Արեւմուտք՝ համաշխարհային հայ ազգին նկատմամբ իր հոգեւոր հեղինակութեան եւ առաջնորդութեան, ներառեալ Հայաստանը:

Սահմանադրութիւնը, ինչպէս նաեւ «Խղճի Ազատութեան եւ Կրօնական Կազմակերպութիւններու» Օրէնքը յստակօրէն կը սահմանագծեն Պետութեան եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ դերերը եւ պատասխանատւութիւնները: Կառուցողական քննադատութիւնը կամ տարակարծութիւնը որեւէ կառոյցի կամ ղեկավարութեան նկատմամբ ընդունելի եւ տրամաբանական են, սակայն ոչ-սահմանադրական քանդիչ միջամտութիւնը եւ խօսոյթը մերժելի են:

Ճիշդ այնպէս, ինչպէս ներկայ կառավարութիւնը կը գործէ ապահովելու համար Հայաստանի խաղաղութիւնը եւ բարօրութիւնը, Հայ Առաքելական Եկեղեցին հիմնասիւնն է երկրագունդի տարածքին Հայութեան հաւատքին եւ ազգային ինքնութեան: Աւելի քան 1700 տարիներ, մեր Ազգային Եկեղեցին, մեր ազգին համար առաջնորդող ուժ եղած է, դիմագրաւելու, տոկալու եւ անխախտ մնալու կայսրութիւններու, թագաւորութիւններու, բռնատիրական իրաւակարգերու, նոյնիսկ Հայկական Յեղասպանութեան միջոցաւ ծրագրուած կերպով մեր ազգը բնաջնջելու փորձերուն դէմ յանդիման:

Մենք կոչ կ'ուղղենք բոլոր կողմերուն, ինքնագուսպ ըլլալ, մերժել պառակտողական տրամադրութիւնները եւ վերադառնալ երկխօսութեան, հիմնուած փոխադարձ յարգանքի եւ ազգային հասարակաց շահի գիտակցութեան վրայ: Պէտք է յառաջ ընթանանք միասնաբար, որովհետեւ միութիւնը զօրութիւն է եւ միայն միասնական ոգիով է որ կրնանք դիմագրաւել մեր դէմ ցցուած մարտահրաւերները:

29 Յունիս 2025, Նիւ Եորք

ԿՐԿԻՆ ՓԱՌԱՏՕՆ

Նորէն Աղեքսանդրիոյ արուեստասէր հասարակութիւնը կ'եռայ լեցուն կաթսայի մը պէս: Տարբեր բոյրերու, տարբեր տարազներու, տարբեր գոյներու, տարբեր լեզուներու խառնարան կը յիշեցնէ այս իրավիճակը: Քաղաքը կրկին իր հիւրընկալ գիրկը բացած էր կարճամեթրաժ ֆիլմերու արդէն 11-րդ միջազգային փառատօնին, 27 Ապրիլէն մինչեւ 3 Մայիսի շրջանին: Դարձեալ ֆիլմեր աշխարհի տարբեր ծագերէն:



Աշխարհի 38 երկիրներէ ներկայացուցիչներ, որոնք եկած էին ներկայացնելու իրենց երկիրը, իրենց մշակոյթը:

Այս Փառատօնին առաջին անգամ մասնակցած էր նաեւ Հայաստան, որ, բնական է, մեր առանձնայատուկ ուշադրութեան կ'արժանանար: Բարձրաճաշակ յանձնախումբը հարկաւ լաւագոյններու շարքին դասեց հայկական գեղեցիկ ֆիլմը: Բազմաթիւ փառատօններու մրցանակներու արժանացած ֆիլմը պէտք է, որ լաւագոյններու մէջ յայտնուէր: Ֆիլմը «մանկական» է՝ իբր պզտիկ աղջկայ քանի մը հարց եւ նոյնքան պարզ պատասխաններ, հրաշալի երաժշտութիւն: Անշուշտ դիպուած չէ, որ մանկականը չակերտներու մէջ առած են: Ֆիլմի մէջ հնչած հարցերը մեծ կեանքի ու խնդիրներու մասին են: Ցաւօք ֆիլմը լայն մասսաներու հասու չեղաւ՝ ցուցադրուեցաւ միայն մէկ անգամ, այն ալ, այլ ֆիլմերու շարքին մէջ: Եգիպտոսի հանդիսատեսը ծանօթ չէ հայկական կինօարուեստին: Կը կարծեմ այդ է պատճառը, որ աշխարհի 40 միջազգային փառատօններու յաղթած եւ բազմաթիւ՝ 23-էն աւելի մրցանակներ շահած՝ «Թռչող տերեւներու երգը» ֆիլմը հանուր պատշաճի չգնահատուեցաւ եւ աննկատ մնաց լայն հանդիսատեսի եւ ժիւրիի աչքէն: Եթէ հնարաւորութիւն ունենայինք աւելի սերտ կապ հաստատել

հայրենի կինօընկերութեան, կամ առանձին ֆիլմարտադրողներու հետ, եւ եթէ ատենը անգամ մը հանդիպումներ եւ ցուցադրութիւններ ունենայինք, գոնէ հայ համայնքին հետ, կը կարծեմ աւելի ծանօթ ու գնահատուած կ'ըլլար մեր ֆիլմը: Հարկաւ, այն դասուեցաւ լաւագոյններու շարքին, սակայն...

Սակայն միայն հայկական ֆիլմը չէ, որ մասնակիցն է այս փառատօնին: Մեր հայրենակից՝ պրն. Դանիէլ Դանիէլ-

եանը «Աղեքսանդրիոյ կարճամեթրաժ ֆիլմերու միջազգային փառատօն»ի մնայուն սիւներէն է: Մեր հայրենակիցը առաջին փառատօնէն մինչ այսօր, անբաժան մաս կը կազմէ գիտական, կազմակերպչական, նկարահանման եւ ընթացիկ այլ գործերու:

38 երկիրներէ ներկայացուած են 2500 եւ աւելի ֆիլմեր: Այս ֆիլմերէն պէտք էր ընտրել փառատօնի 6 անուանակարգերի համար լաւագոյնները: Իւրաքանչիւր անուանակարգ իր նախասիրութիւնն ունի: Իւրաքանչիւր երկիր՝ միայն 1 ֆիլմի իրաւունք: Ընտրութեան դժուարին խնդրի լուծումը նոյնպէս վստահուած է պրն. Դանիէլեանին: Ընտրողներու մեծ խումբին պատասխանատուն է մեր հայրենակիցը:

Փառատօնին ներկայացուած Եգիպտոսի՝ «2 օր առանց քնանալու» ֆիլմի մէջ, ամբողջ գիշերը նկարահանուելէն ետք, պրն. Դանիէլը աճապարեց չուշանալ ընտրուող ֆիլմերու դիտումներէն՝ առանց հանգիստի մասին խորհելու: Այսքան մեծ նուիրում եւ պատասխանատուութիւն իր գործին հանդէպ, ամէն մարդ չի կրնար ունենալ: Վերջապէս ընտրուած 66 ֆիլմերը պէտք է թարգմանել: Պրն. Դանիէլեանի շուրջ հաւաքուեցաւ երիտասարդ թարգմանիչներու եւ դեռ ուսանողներու հսկայ խումբ մը, որ յանձն առաւ



թարգմանել ընտրուած ֆիլմերը: Կենսուրախ այս խումբը, իր աւագ ընկերոջ՝ պրն. Դանիէլեանի ղեկավարութեամբ, պատուով կատարեց իր առջեւ դրուած խնդիրը:

Այնուհետ սկսաւ փառատօնի մրցոյթային իրարանցումը, սակայն պրն. Դանիէլի գործը չվերջացաւ. հանդիպումներ օտար ֆիլմարտադրողներու հետ, հարցազրոյցներ, նոր ծանօթութիւններ... Նոյնիսկ վերջին՝ փառատօնին փակման օրը, սրահին մէջ նստած օտարի մը կը թարգմանէր արարողակարգի անցուդարձը: Ճիշդ այդ պահուն ալ պրն. Դանիէլեանին հրաւիրեցին բեմ, ոսկի «Հեպատիա»ն ստանալու: Տարիներ շարունակ բանաւոր խօսքով շնորհակալութիւններ շատ եղած են, բայց ստանալ փառատօնի գլխաւոր մրցանա՞կը... Պրն. Դանիէլեանը անակնկալի եկաւ, յուզմունքը գոցեց կոկորդը, արցունքները մնացին աչքերէն կախ՝ ամէն վայրկեան յորդելու պատրաստ: Մեր հայրենակցի յուզմունքը, բնական է, որովհետեւ զինք կը համարէ, որ իր գործը կ'ընէ՝ սիրայօժար կերպով: Ոսկի Հեպատիան ձեռքերուն մէջ, յուզմունքէն շնորհակալութեան խօսքեր չէր կրնար արտասանել պրն. Դանիէլեանը, իսկ օփերային մեծ սրահը յոտնկայս բարձր կը ծափահարէր զինք: Ամբողջ յուզմունքը ջանալով զսպել, մեր յարգելի հայրենակիցը շնորհակալութիւն յայտնեց եւ համեստօրէն ըսաւ, որ այս պարգեւը նաեւ իր համայնքինն է, իր ժողովուրդինը, որուն պատուաւոր զաւակն է ինք, որովհետեւ պարգեւը յանձնելու ընթացքին նշեցին, որ պրն. Դանիէլեանը Աղեքսանդրիոյ հայ համայնքէն է, բանիմաց, պարտաճանաչ, աշխատասէր, ազգութեամբ հայ ճարտարագէտ մը, որ վաղուց դարձած է արուեստագէտ եւ Աղեքսանդրիոյ կարճամեթրած ֆիլմերու միջազ-



գային փառատօնի հաստատուն սիւներէն մէկը: Հաճելի է, երբ կը գնահատեն կատարած աշխատանքը: Անշուշտ, հաճելի է եւ հպարտանալու եւս մէկ առիթ, որ հայ մը օտար երկրի մէջ - իր երկրորդ հայրենիքը - ոչ միայն ներկայացեր է որպէս հայ ժողովուրդի արժանի զաւակ, եւ անուն ու

հպարտութիւն բերած է ե՛ւ իրեն, ե՛ւ ազգին:

Ամբողջ համայնքի անունէն կը շնորհաւորենք մեր սիրելի պրն. Դանիէլ Դանիէլեանը այս հաճելի եւ յուզիչ իրադարձութեան առիթով եւ կը մաղթենք նոր յաջողութիւններ:

Փառատօն մը եւս անցաւ պատմութեան գիրկը: Չուող թեչուններու պէս, չուեցին հեռացան բոլոր մասնակիցները: Հեռացան, իւրաքանչիւրը իր հետ տանելով տպաւորութիւններ, հանդիպումներ, նոր ծանօթութիւններ եւ գեղեցիկ յուշեր եգիպտոսէն եւ փառատօնէն, տպաւորիչ ֆիլմերու մասին:

Արեւային մեր քաղաքը ընկղմեցաւ իր սովորական առօրեայի մէջ՝ արեւը կը շողայ, ծովը կը ծփայ... Իւրաքանչիւր անձ վերադարձաւ իր գործին.... Իսկ փառատօնը կազմակերպողները, իրենց միտքին մէջ պահած այս փառատօնին հաճելի եւ անախորժ պահերը, կը խորհին նոր՝ գալիք փառատօնին մասին:

**Անժիկ Յակոբեան Կանիմեան
Աղեքսանդրիա**



ՀԵԼԻՈՊՈԼԻՍ 120

Պարոն Ամփէնի եւ Պօղոս Փաշա Նուպարի հիմնած այս գեղեցիկ աւանը արդէն 120 տարեկան է:

Արուեստէն աւելի գեղեցիկ ձեւ կա՞յ այս տարեդարձը տօնելու:

Իրապէ՛ս, գլխաւորաբար Հելիոպոլսոյ շինարարութեան եւ բնակչութեան ընկերութեան յանձնախումբը, գլխաւորութեամբ արուեստագէտ Աշրաֆ Նասիֆի, այլ կազմակերպութիւններու հետ միասնաբար կազմակերպած էր Հելիոպոլսոյ նուիրուած ցուցահանդէս մը, որուն բոլոր նկարներն ալ ներշնչուել են այս համեմատաբար նոր, բայց Գահիրէի համար շատ կարեւոր աւանէն:

Կազմակերպումի եւ ֆինանսաւորումի աշխատանքներուն մասնակցելու էին մէկէ աւելի կազմակերպութիւններ եւ հիմնարկներ, ինչպէս Կապի եւ Տեղեկատուական ճարտարարուեստի նախարարութիւնը, Պարոն Ամփէնի պալատը, Քաղաքային համակարգման ազգային մարմինը, Հելիոպոլսոյ շինարարութեան եւ բնակչութեան ընկերութիւնը, Գահիրէի Անգլիական եւ Ֆրանսական համալսարանները եւ այլ կազմակերպութիւններ:

Ձեռնարկը ծրագրուած էր ամբողջ շաբթուան մը համար՝ 16-27 Մայիսի տեւողութեան եւ կը կրէր «Երեկուան Ժառանգութիւնը, այսօրուան կեանքը, վաղուան ձգտումը» լոգունգը:

Ճիշդ է, որ Գահիրէի գաղութը սկիզբէն իսկ հարուստ եղեր է արուեստագէտ-նկարիչներով, սակայն անոնք բոլորը չէ, որ մերուեր են տեղական միջավայրին եւ մասնակցել տեղացիներուն կազմակերպած ձեռնարկներուն:

Այս նկարիչներուն մէջ բացառութիւն կը կազմէ Վահէ Վարժապետեան, որ յաճախ կը մասնակցի տեղական ցուցահանդէսներու:

Այս անգամ եւս, «Հելիոպոլիս 120» ցուցահանդէսին իր մասնակցութիւնը բերել էր երկու գեղանկարներով, երկուքն ալ Հելիոպոլսոյ թաղերէն եւ այնքան սիրելի



սրճարաններէն ներշնչուած:

Այս ցուցահանդէսը, որ տեղի կ'ունենար Կապի եւ Տեղեկատուական ճարտարարուեստի նախարարութեան վերջերս շքեղօրէն վերանորոգուած պալատին մէջ (որ նախապէս Սուլթանուիի Մալաքին պալատը եղած է), բացուած յայտարարեցաւ Շաբաթ, 17 Մայիս 2025-ին երեկոյեան, մեծաթիւ բազմութեան մը ներկայութեամբ, որ խճողել էր ցուցադրութեան տրամադրուած երկու սրահները:

Մասնակցել էին 40 նկարիչներ, տարբեր ոճի նկարներով, որոնց քովէ քով երեւումը հետաքրքրական խճանկար մը ստեղծել էր, որ կ'արտայայտէր մէկ կողմէ աւանին տարբեր երեսակները, միւս կողմէ՝ երփներանք փաղանգը Հելիոպոլսոյ մէջ բնակող գեղանկարիչներուն:

Բացման արարողութենէն ետք, կառոյցին հին եւ վերանորոգուած սրահին մէջ տեղի ունեցաւ Հելիոպոլսոյ պատմութեան նուիրուած դասախօսութիւն մը, Դոկտ. Մոնիգայի կողմէ, արաբերէն լեզուով անշուշտ եւ պաստառի վրայ ցուցադրուող լուսանկարներով: Այս դասախօսութիւնը եւս հետաքրքրութիւն արթնցուցած էր եւ կոկիկ թիւ մը ունկնդիրներու ներկայ էր:

Կազմակերպիչները մեծ խանդավառութեամբ եւ մեծ ծրագիրներով կը պատրաստուին արդէն «Հելիոպոլիս 125»-ը տօնելու աշխատանքներուն:



ԿՐԹՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՁԵՒԱԴՈՐՈՒՄ ՍՓԻԻՌԻ ՄԷՋ

Եզիպտահայ գաղութը բարեբախտությունը ունեցավ իր մեջ հիւրընկալելու Հայկազեան Համալսարանի (Պէյրուս, Լիբանան) դասախօսուհի դոկտ. Շադիկ Գանտահարեան-Խուտավէրտեանը, յատուկ հրաւերովը Գահիրէի Հայոց Թեմի Առաջնորդարանին, Հայկազեան Համալսարանի 70-ամեակի տօնակատարություններու ծիրէն ներս:

Դոկտ. Շադիկ Գանտահարեան-Խուտավէրտեան դասախօս է Հայկազեան Համալսարանէն ներս, հոգեբանութեան եւ մանկավարժութեան ճիւղերուն. նոյն այս նիւթերը կը դասաւանդէ նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեմանքէն եւ Կաթողիկոսութեան հայագիտական հիմնարկէն ներս:

Իր խօսքին սկսելէ առաջ, յարգելի դասախօսուհին շնորհակալութիւն յայտնեց Թեմիս բարեջան Առաջնորդ Աշոտ Եպս. Մնացականեանին, որ Հայկազեան Համալսարանի 70-ամեակը նաե՛ւ Գահիրէի մէջ ուզած էր նշել, այս դասախօսութեամբ:

Խօսելով իր մասին, դոկտ. Խուտավէրտեան նշեց, որ իր վարդապետական թեզին նիւթը եղած է «Ազգային Ինքնութիւն եւ Սփիւռքէն ներս անոր կազմաւորումը», որուն հիման վրայ համալսարանը որոշած է որ այս նիւթը նաեւ Գահիրէի մէջ ներկայացուի:

Դոկտ. Խուտավէրտեան նախ խօսեցաւ Հայկազեան Համալսարանին՝ «Սփիւռքի միակ հայկական համալսարանին» եւ անոր 70-ամեակին մասին.

«Այս համալսարանը իր երթով եւ վաստակով անփոխարինելի դեր ունի Սփիւռքի պարունակէն ներս, որովհետեւ նախ ունի իրապէ՛ս որակաւոր ծրագիր եւ կրթական համակարգ, ունի բարձրորակ դասախօսական կազմ, ունի կարելոր դեր իբրեւ մարդասիրական արժէքներու ջատագով, բայց նաեւ հայկական ազգային ժառանգութեան պահպանումին մէջ ունի իր որոշիչ դերը, որովհետեւ, հակառակ անոր որ մեր միջավայրը բազմալեզու է,



բազմամշակոյթ է եւ բազմակրօն – մեր համալսարանէն ներս միայն հայեր չեն որ կ'ուսանին, ընդհակառակը՝ մեծամասնությունը ոչ-հայեր են – բայց հոն յատուկ միջոցներ եւ միջոցառումներ կան հայ ուսանողին համար, որպէսզի կարենայ զարգանալ, մասնագիտանալ ի՛ր ընտրած մասնագիտութեան մէջ, եւ յետոյ կարենայ իր կարողականութիւնը ի սպաս դնել Սփիւռքի աշխատանքներուն հզօրացման համար»:

Յարգելի դասախօսուհին ներկայացուց Հայկազեան Համալսարանի եզակի կարելիութիւնները, որոնցմէ մէկն ալ մատենադարանն է, որ ունի անգլերէն գիրքերու եւ մամուլի հաւաքածոներ Պարսումեան գրադարանին մէջ եւ հայերէն հաւաքածոներ, Տէրեան գրադարանին մէջ: Համալսարանը ունի նաեւ Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն մը, ինչպէս եւ հայագիտութեան ամպիոն, մնացեալ մասնագիտութիւններուն կողքին»:

Հայկազեան Համալսարանի կարգախօսն է՝ «Ճշմարտութիւն, Ազատութիւն եւ Ծառայութիւն». ասկա, ըստ դասախօսուհիին, ցոյց կու տայ, թէ ինչպիսի մթնոլորտ մը կը տիրէ համալսարանէն ներս՝ մարդասիրական, համամարդկային եւ ազգային արժէքներուն տրուած կարելութեամբ:

«Մեր նախագահին՝ վերապատուելի դոկտոր Փոլ Հատոսթեանի առաջնորդու-



թեամբ մենք ամէն օր կը ձգտինք աւելի լաւին, յառաջդիմութեան բոլոր գործօնները կը փորձենք լաւագոյնս օգտագործել» ըսաւ դասախօսուհին:

Ապա ներկայացուց իր նիւթը մանրամասն եւ յստակ կերպով, պաստառին վրայ ցուցադրուած յատակագիծին օգնութեամբ:

Սկիզբը ներածական մը տուաւ՝ Ինքնութեան էութիւնը բացայայտող, ապա ներկայացուց ազգային ինքնութեան սահմանումն ու անոր որոշիչ գործօնները, ի վերջոյ անցնելու համար հայկական ինքնութեան, որպէս բնութագրում եւ ազդեցութիւններ, ուր իրենց որոշիչ դերը ունին մեր պատմական հայրենիքը, ներկայ Հայաստանը, ցեղասպանութիւնը, հայ դատը, Սփիւռքը եւ սփիւռքահայու ինքնութիւնը, համաշխարհայնացումը, անոր առնչուող երեւոյթներով եւ ի վերջոյ՝ մեր դիմագրաւած ազգային մարտահրաւերները:

Ապա դոկտ. Խուտավէրտեան ներկայացուց ինքնութեան ձեւաւորումին նպաստող մարզերը, ազգային ինքնութեան կազմաւորումը, կրթութեան առնչութիւնը ազգային կազմաւորումին մէջ, եւ ի վերջոյ՝ ակնկալութիւններն ու մարտահրաւերները:

Դասախօսութեան աւարտին յարգելի դասախօսուհին ներկայացուց իր առաջադրանքները եւ ըսաւ.

–Ազգային ինքնութեան կազմաւորումը, իբրեւ առանցքային կարեւորութիւն ներկայացնող առաջնահերթ առաքելու-

թիւն, զոր պէտք է խարսխել քննական միտքի զարգացումի գործընթացին վրայ:

–Ապահովել վերոնշեալ երկուքին համատեղ ընթացքն ու համադրուած զարգացումը:

Ներկաները մեծ ուշադրութեամբ հետեւեցան այս խիստ հետաքրքրական եւ շինիչ դասախօսութեան եւ իրենց բուն ծափահարութիւններով գնահատեցին օրուան դասախօսուհին, որ պատասխանեց տրուած հարցումներուն:

Երեկոյին ներկայ էին նաեւ Գալուստեան–Նուպարեան Ազգ. Վարժարանի երկրորդական կարգերու մէկ քանի աշակերտուհիներ, որոնցմէ մէկուն հարցումը հետաքրքրական էր.

–Ի՞նչ է տարբերութիւնը Հայկազեան համալսարանին եւ այլ համալսարաններու, եւ ինչո՞ւ նախընտրելի է որ այնտեղ ուսանիմ որպէս հայ:

Այս հարցումին իր պատասխանին մէջ դոկտ. Խուտավէրտեան շեշտը դրաւ հայկական գործօնին եւ ընդհանրապէս համալսարանի մաքուր եւ ընկերային մթնոլորտին վրայ: Նշեց նաեւ, որ Համագային Կրթական եւ Մշակութային Ընկերակցութիւնը կ'որդեգրէ իւրաքանչիւր ուսանող, որ Հայկազեան Համալսարանէն ներս հայագիտական նիւթեր կ'ուսանի, վճարելով անոր ամբողջ կրթաթոշակը, այն միակ պայմանով, որ աւարտելէ ետք շրջան մը ծառայէ Սփիւռքի որեւէ երկրի որեւէ գաղութին մէջ, որպէս ուսուցիչ:

Երեկոն փակուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր խօսքով:

ԳՐԻՉ

Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանին մէջ պահուող 1166 թուականի հայկական ձեռագիրներէն մէկը կը ներկայացնէ գրող մը, ձեռքին ինքնահոս գրիչ:

Գրիչը պամպույի եղէգ մըն է, մէջտեղի գրչածայրին հետ գնդիկ մը կապուած:

Գիտնականները կ'ենթադրեն, թէ միջնադարեան մեղանի թանձրութիւնը ստի-

պեր է գրողներուն ստեղծել նախատիպը ներկայիս օգտագործուող գնդիկաւոր ինքնահոսին:

Նման գրիչներ կը տեսնենք նաեւ 1173-ի, 1211-ի եւ 1219-ի ձեռագիրներուն մէջ:

Ասոր գլխաւոր հաստատումը կու գայ 1435-ի ձեռագրին մէջ, որուն հեղինակը կ'ըսէ, թէ ինք 900 տող գրեր է միայն մէկ անգամ գրիչը մեղանին մէջ թաթխելով:



ԱԼԻՆ ԳՈՒԹԱՆԻ ՀԱՄԵՐԳԸ

Հայկական Ընթերցասրահը վարժեցուցեր է եգիպտահայ հանդիսատեսին հերթականօրեն հրամցնել միջոց գեղեցիկ եւ ինքնուրոյն համերգներ, որոնք մեր ազգային ոգին խանդավառելու կողքին, նաեւ հայկական թէ միջազգային դասական երաժշտութեան հաճելի պահեր կը պարգեւեն ներկաներուն: Նախավերջին համերգը, եթէ կը յիշէ հանդիսատեսը, «Նայիրեան վոգալ անսամպլ»ի համերգն էր, որ նոյնքան մեծ խանդավառութիւն ստեղծեց ունկնդիրներուն մօտ, որքան այս վերջինը:

Հայկական Ընթերցասրահի հերթական համերգն էր Կիրակի, 15 Յունիսի երեկոյեան, Պրլըքտանեան հանդիսասրահէն ներս, ուր անսպասելիօրէն մեծ թիւ մը ներկայ էր, ըմբոշխնելու այս գեղեցիկ երեկոն:

Համերգը սկսաւ տոքթ. Հերմինէ Պալաեանի բացման պատշաճ խօսքով, որմէ ետք ելոյթ ունեցաւ գանատահայ երգչուհի Ալին Գութան, որ մասնաւորապէս հրաւիրուած էր այս համերգին համար, ճիշտ յայտագիրով մը:

Յայտագրին երկու բաժիններն ալ կազմուած էին հայկական դասական երգերէ, միջազգային երաժշտութենէն եւ նշանաւոր օփերաներէ առնուած **արիան**ներէ:

Հայերէն երգացանկով երգչուհին ներկայացուց Կոմիտասեան ինը երգեր, Գութան Ալեմշահէն երկու, Բարսեղ Կա-



նաչեանէն երեք, Ալեքսանդր Դոլուխանեանէն մէկ եւ Արմէն Տիգրանեանի «Անոյշ» օփերայէն երկու երգեր: Միջազգային երգացանկէն տիկին Գութան ներկայացուց Պէլլինիէն, Փուչինիէն եւ Վերտիէն երեք **արիան**ներ:

Ներկաները մեծ հաճոյքով ունկնդրեցին համերգը եւ իրենց բուռն ծափահարութիւններով գնահատեցին տիկին Ալին Գութանի ելոյթը, որ երկար ծափողջիւններէ ետք անգամ մը եւս երեւցաւ բեմին վրայ իր գեղեցիկ ժպիտով եւ կրկին պարգեւեց հաճոյքը իր երգին:



Սօփրանօ Ալին Գութան աւելի քան երեսուն տարիներէ ի վեր կը հմայէ ունկնդիրը իր բիրեղեայ գլգլուն ձայնով, բեմական հզօր ներկայութեամբ եւ հարազատ մեկնաբանութիւններով:

Տիկին Գութան դափնեկիր է Մոնրէալի Սէմֆոնիք Նուագախումբին (1993), Նիւ Եորքի Մեթրոփոլիթըն Օփերային (1995) եւ Նիւ Եորքի Ճորճ Լանտըն Հիմնադրամին (1996):

Տիկին Գութան իր հերթական համերգային թէ օփերաթիք ելոյթներուն կողքին կը զբաղի նաեւ ձայնամարզութեամբ Մըքհիլ Համալսարանէն եւ Մոնրէալի երաժշտանո-

շար. էջ 23 →



«ԿԵԱՆՔԻՍ ՄԱՇՐԱՊԻԱՆ»¹

Թէեւ երեսուն տարիներէ ի վեր նախկին եգիպտահայ գրագէտ, եգիպտական եւ արաբական թերթերու թղթակից Թովմաս Կորկիսեան բնակիչ է Ամերիկայի Միացեալ Նահանգներու Ուաշինկթըն քաղաքին, սակայն բնաւ չէ կտրած իր կապն ու յարաբերութիւնը ծննդավայրին, ազգականներուն, ընկերներուն թէ տեղացի արաբներուն հետ, որոնց բոլորին կ'այցելէ գոնէ տարին մէկ անգամ, երբ եգիպտոս գտնուի:

Իր երրորդ գիրքին – որ կը կրէ գրութեանս խորագիրը – լոյս ընծայումին առիթով շնորհանդէս մը եւս տեղի ունեցաւ, այս անգամ Յուսաբեր Մշակութային Միութեան կազմակերպութեամբ (Հելիոպոլիս), Կիրակի, 29 Յունիս 2025-ին, ակումբին Գարագաշեան սրահէն ներս: Գիրքը լոյս տեսած է եգիպտոսի մեծագոյն հրատարակչատուններէն մէկէն՝ «Ալ Շրուք»էն:

Առաջին շնորհանդէսը տեղի ունեցած էր գիրքին հրատարակումէն գրեթէ ամիս մը ետք՝ 10 Փետրուար 2025-ին, Գահիրէի մէջ:

Բացման խօսքը կատարեց տոքթ. Արմէն Մազլումեան, վեր առնելով երիտասարդ օրերու Կորկիսեանի դերը ակումբէն ներս, որմէ ետք Կորկիսեան խօսեցաւ իր գիրքին, ծնողքին, եգիպտահայ գաղութին եւ եգիպտոսի կեանքին մասին, իսկ ներկաներէն ոմանք հարցումներով լուսաբանութիւններ խնդրեցին հեղինակէն:

Պէտք է նշել, որ ներկաներուն մեծամասնութիւնը եգիպտոսի լրագրական ասպարէզէն ներս իրենց անունն ու ներդրումը ունեցող մարդիկ էին, որոնք բարձր գնահատեցին հեղինակին մարդկային ջերմութիւնն ու գրելու ոճը: Ներկայ էին նաեւ եգիպտահայ գաղութի անդամներէն

ոմանք եւ հեղինակին այլ երկիրներէ եկած ազգականները:

Գիրքը, որուն խորագիրը տեղական գոյն եւ բոյր ունի, Կորկիսեան նուիրեր է Հայաստանի Ազգային Գրադարանին, որուն կայքէջին վրայ հետեւեալը կը կարդանք.

«Գիրքը գրուած է ականատեսի աչքերով, այլ ոչ թե հետազօտողի: Հեղինակն անդրադառնում է եգիպտոսի մշակոյթի պատմութեան մէջ հայերի, ինչպէս նաեւ հայ

մշակոյթի պատմութեան մէջ եգիպտոսի դերին: Նա ներկայացրել է 1911 թուականին Մարտիրոս Սարեանի եւ Կոմիտաս Վարդապետի եգիպտոս կատարած այցելութիւնները: Եգիպտոսը նշանակալի հետք թողեց Սարեանի ստեղծագործութեան մէջ, որն այնտեղ վրձնեց իր «Եգիպտական դիմակներ», «Քայլող կինը» եւ «Գիշերային բնակար. եգիպտոս» կտաւները: Հետաքրքիր է, որ Կոմիտաս Վարդապետը նոյնպէս, նոյն 1911-ին եղել է եգիպտոսում, համերգներ եւ բանախօսութիւններ ներկայացրել Աղեքսանդրիայում եւ Գահիրէում»:

«Գիրքին գլուխների խօսուն վերնագրերը՝ «Գահիրէն, որ հետս կ'ապրի», «Ուաշինկթընը, որտեղ ապրում եմ» վկայում են, որ այն գրուած է փաստագրական հիմքով եւ գեղարուեստական շարադրանքով: Ներկայացուած են բազմաթիւ լուսանկարներ հեղինակի անձնական արխիւից: Թովմաս Կորկիսեանի գիրքը արժէքաւոր ներդրում է եգիպտահայ կեանքն ուսումնասիրողների համար»:

Հեղինակը իր այս երրորդ գիրքը (երեքն ալ արաբերէն լեզուով) ձօներ է ծնողներուն:

¹ Արաբերէն, արաբական ճարտարապետութեան յատուկ փողոցին նայող լուսամուտներու փայտեայ նախշուած ծածք, որ կ'արգիլէ դէպի ներս տեսնելը, բայց անոր ետին կեցողը կրնայ յստակօրէն դիտել փողոցին անցուղարձը:



ՍԱՐԳԻՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՀԵՏ

Վերջերս հիւրաբար քաղաքս կը գտնուէր նախապէս Գահիրէ ապրած եւ աշխատած Սարգիս Մանուկեան, որ երկար տարիներէ ի վեր կ'ապրի Աւստրալիոյ Սիդնի քաղաքը, անդամ է ՀԲԸՄիութեան եւ խմբագիրը միութեան «Միութիւն» հանդէսին:

Երջանկայիշատակ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի օրերուն շրջանաւարտ եղած է Ս. Էջմիածնի Գեորգեան Ճեմարանէն, ուր դասընկեր եւ սենեկակից որպէս ունեցեր է Սիդնիի երբեմնի Առաջնորդ Հայկազուն Արք. Նաճարեանը: Այսօր Սիդնիի Առաջնորդն է Վարդան Եպս. Նաւասարդեան:

Երբ պարոն Ս. Մանուկեան այցելեց Միութեանս կեդրոնը, մենք առիթը օգտագործելով հարցազրոյց մը ունեցանք իր հետ, Միութեան անդամներն ու սփիւռքահայութիւնը հետաքրքրող կարգ մը հարցերու շուրջ:

Տեղեկատու – Կրնա՞ք խօսիլ «Միութիւն» հանդէսին մասին:

Սարգիս Մանուկեան – Թէեւ դժուար է ամէն ամիս թերթ հրատարակելը, սակայն կարելի կը դառնայ: Պէտք է ըսել, որ Աւետիս Եափուճեան, որ մինչեւ իր մահը խմբագիրն էր հանդէսին, մեծ աշխատանք տարած էր: Այսօր սակայն ժամանակները նոր ոճ եւ նոր ոգի կը պահանջեն: Եափուճեանի օրերուն կուսակցական բաժինը (ՌԱԿ) աւելի ընդարձակ էր. սակայն ժողովուրդը ա՛լ չի հետաքրքրուիր կուսակցական բախումներով, ինչպէս եւ կը հրատարակէր իր նախապէս գրուած յօդուածները... Պէտք էր աւելի հետաքրքրական ձեւ մը գտնել: Փաստօրէն կրցայ ատիկա ապահովել ժողովուրդին համար, եւ հիմա շատ աւելի ընդունուած եւ սիրուած է հանդէսը: Դժբախտաբար սակայն նոր բաժանորդներ չկան, հին սերունդը կը պակսի, երբեմն իրենց տեսողութեան տկարութեան պատճառով կը մերժեն ընդունիլ թերթը:

Տ. Ընդհանրապէս պէտք է բաժանորդ-



դագրուիլ եւ վճարո՞ւմ մը կատարել:

Ս. Մ. Այո՛, տարեկանը յիսուն (50) տոլար է, որ ոչինչ գումար է Սիտնիի համար:

Տ. «Տեղեկատու»ն այստեղ ձրի կը տրամադրուի փափաքողներուն:

Ս. Մ. Հոն ալ կ'ուզենք նոյնը ընել, բայց պէ՛տք է ծախսը գոցել, ծախսը շատ է: Բարեբախտաբար կան նուիրատուութիւնները, որոնք բաւական տարբերութիւն կ'ընեն, մանաւանդ որ Միութեան կարողութիւնը այնքան ալ մեծ չէ:

Տ. Ի՞նչ է հայերուն թիւը Սիտնիի մէջ:

Ս. Մ. Սիտնիի հայերուն եւ Աւստրալիոյ գաղութին հայերուն թիւին մէջ մեծ տարբերութիւն կայ, Սիտնիի հայերուն թիւը կրնայ տասնհինգէն քսան հազարի մէջ ըլլալ, իսկ Աւստրալիոյ գաղութին թիւը կրնայ քառասուն հազար կամ քիչ մը աւելի ըլլալ: Դժբախտաբար սակայն երկիրը շատ մեծ է, իսկ հայերը ցրուած են հոն: Ասիկա մեծ մտահոգութիւն է մեզի համար: Երբ ես նոր հասայ, հարցուցի թէ այնինչ տեղը երթալու համար որքա՞ն ժամանակի կարիք կայ, ըսին՝ մօտ է, երկու ժամ: Կատա՛կ կ'ընէք, ըսի, ես երկու ժամէն Պէյրութէն Դամասկոս կ'երթամ... Եթէ ընտանիք ունիս եւ աշխատանք, արդէն այդքան ժամանակ ծախսելը բաւական շատ է: Ասիկա անպատեհութիւն մըն է, բայց երկրին ապահովութիւնն ու կարգապահութիւնը, պետութեան խնամքը ժողո-



վորդին հանդէպ, իսկապէս անգնահատելի են. բան մը որ Ամերիկա չկայ այս օրերուն:

Տ. Միշտ ալ Միջին Արեւելքի հայութեան աչքը դէպի Ամերիկա եւ Գանատա եղեր է: Գանատան, այո, բայց Ամերիկան այսօր նոյնքան անապահով է, որքան Միջին Արեւելքը:

Ս. Մ. Ես յաճախ նաեւ Վենետիկի Ս. Ղազար վանքը կ'այցելեմ, որովհետեւ նախապէս աշակերտած եմ հոն: Դժբախտաբար մարդ չէ մնացած, նոր աշակերտներ, վարդապետներ չկան: Վանքը գրեթէ պարապ է: Իմ տարիներու քառասուն աշակերտ կար, առաւել սարկաւազներու բաժինը, ուր 7-8 սարկաւազներ կային, այսօր քանի մը վարդապետ կայ միայն: Շատ ցաւալի վիճակ է:

Տ. Մեր բոլոր կառոյցները, որոնք ուսումի, գիր-գրականութեան հետ կապ ունին, ցաւալի վիճակ մը կը պարզեն:

Ս. Մ. Ես նոյնիսկ սկսեր եմ ինքզինքիս հարց տալ, նկատի առնելով Լիբանան-Սուրիա կացութիւնը, ի՞նչ պիտի ըլլայ Կիլիկիոյ Աթոռին վիճակը ապագային: Երբ Սփիւռքի յանձնակատար Զարեհ Սինանեանը մեր մօտ էր, հարցուցի՝ ի՞նչ պիտի ըլլայ, ըսաւ՝ շատ հաւանաբար Ամերիկա պիտի երթայ: Ատիկա սակայն վերջի մը սկիզբը կրնայ ըլլալ:

Տ. Պէտք է նկատի առնէք սակայն, որ հիմա, երբ կրթաթոշակները շատ բարձր են, շատերու համար գրեթէ անմատչելի, դպրեվանքին աշակերտութեան թիւը յաւելում կրած է:

Ս. Մ. Բայց երբ ժողովուրդը պակսի գաղութին մէջ, կը նշանակէ թէ թեմը կը տկարանայ: Մեր եւ մեզմէ առաջուան սերունդին մէջ այնպէս մը նստած է ազգային դաստիարակութիւնը, որ այսօրուան կացութիւնը ցաւ կը պատճառէ մեզի: Բայց իրականութիւնն է:

Ես ծնունդով Քեսապէն եմ, բայց փոքր հասակէս Պիքֆայա Մխիթարեաններուն գացեր եմ, անկէ ալ՝ Ս. Ղազար, որմէ ետք Հայաստան ապրեր եմ: Հայրս կորսնցուցեր եմ շատ կանուխ, մայրս ի վիճակի չէր մեզ պահելու: Երբ Ս. Ղազարէն վերադարձայ, մտածեց զիս ուրիշ տեղ մը ղրկել: Վարդապետ մը ունէինք, որուն

անունը դժբախտաբար մոռցեր եմ, մօրս խորհուրդ տուաւ զիս Էջմիածին ղրկել: Այդպէս է որ Գէորգեան Ճեմարան գացի: Այդ օրերուն Հայաստանը ինծի համար գիւտ էր, բնաւ ծանօթ չէի, բայց ամենէն կարելորդ՝ Վենետիկէն ունեցած փորձառութիւնս էր: Բարեբախտաբար ծանօթ էի արեւելահայերէնին: Վենետիկի մէջ հանդիպեր էինք Տիգրան Պետրոսեանին, տասնմէկ տարեկան էի եւ արեւելահայերէնը խորթ էր ինծի. ընկերներս եւ ես կը զգայինք որ Պետրոսեանին խօսածը հայերէն է, բայց մեր խօսածին նման չէ, հասկնալի չէ: Էջմիածնայ մէջ Արամայիս Սահակեան անունով (ոչ բանաստեղծը) ուսուցիչ մը ունէինք, որ ըսաւ՝ «ինծի դուր եկաւ». չհասկցայ. իմ գիտցածս «դուռ»ն էր, իսկ ի՞նչ կը նշանակէր «դուր եկաւ», հետեւաբար ու-ով գրեցի. ասիկա ուղղաբարկան առաջին սխալս էր. բարկացաւ՝ «դուրը ինչպէ՞ս ու-ով կը գրես, դուր դուրեկան բառը ու-ով կը գրուի»: Ի՞նչ իմանայի: Հիմա սկսեր եմ թերագնահատել արեւելահայերէնը, Սիտնիի մէջ ալ յօդուածներով եւ գրութիւններով պայքար մղել, որովհետեւ այնտեղի օտարաբանութիւնը այնքան շատցած է, որ սկսեր է հայերէնի չնմանիլ: Գրութիւններէս մէկուն մէջ, ակնարկելով պետութեան ըսեր էի՝ «դո՛ւք էք որ հոսփոխալացուածին պէտք ունիք եւ դուք էք բացիները»...

Տ. Եթէ մենք չունենանք այդ բառերը, ստիպուած կ'ըլլանք օտար բառը գործածելու, բայց ունի՞նք, գեղեցիկ բառեր ունի՞նք՝ հիւանդ, հիւանդանոց, բժիշկ, բուժքոյր եւ այլն:

Ս. Մ. Ես նաեւ երկրորդական կարգերու հայերէնի ուսուցիչ եղած եմ, պետութեան կողմէ սահմանուած, շաբաթօրեայ դպրոցին մէջ, եւ որպէս ուսուցիչ, պետութեան կողմէ մեզի արգիլուած էր **ֆէյսպուր** ունենալ: Տարիներու ընթացքին, նկատի առնելով դիմատետրին թերի կողմերը, մտածած էի, որ չունենալս աւելի լաւ է: Վերջերս սակայն որոշեցի ունենալ:

Տ. Դիմատետրին հետեւիլը նաեւ տուեալ անձէն կախեալ է՝ եթէ լաւ բաներու կը հետեւիք, լաւ բաներ կը տեսնէք հոն. թէեւ շատ վատ բաներ ալ կան... Օրինակ ես ամէն շաբաթ յօդուած



ունիմ Հալէպի «Գանձասար» շաբաթաթերթին մէջ, որ դիմատետրին վրայ ալ կ'երեւի. եթէ հետեւիք, կը տեսնէք:

Կրնա՞նք խօսիլ Սիտնիի ՀԲԸՄիութեան մասին:

Ս. Մ. Նախ պէտք է ըսեմ, որ գաղութը զարթօնքի մէջ է:

Տ. Ե՛րբ հիմնուած է:

Ս. Մ. Գրեթէ 60 տարի առաջ. անցեալ տարի 60-ամեակը տօնեցինք, թէ՛ ՀԲԸՄի որպէս միութիւն, թէ՛ սրահին 60-ամեակը. Սրահը 1948-էն ետք գործունէութեան մէջ եղած է: Գաղութը առաջին օրէն եկեղեցւոյ հետ հիմնուած է: Գաղութին մօտիկութիւնը եկեղեցիին զօրաւոր կերպով զգալի է կրնամ ըսել: ՀԲԸՄիութիւն եւ եկեղեցի մի՛շտ համագործակցած են. մեր դպրոցին աշակերտներն են, որ կը մասնակցին եկեղեցական արարողութիւններուն կամ Կիրակնօրեայ դպրոցին: Ունինք Ալէք Մանուկեան շաբաթօրեայ դպրոցը, որ նոյնպէս 60 տարուան կեանք մը ունի, որովհետեւ եկեղեցին մտածած է, որ գաղութը նաեւ դպրոց պէ՛տք է ունենայ. շրջան մը ետք դպրոցը յանձնուեր է ՀԲԸՄիութեան, որովհետեւ եկեղեցին միջոց չէ ունեցած դպրոցին նիւթականը հոգալու: Բայց տարածութիւններուն հեռաւորութիւնը, հայերէնին նահանջը եւ ծնողներուն անտարբերութիւնը պատճառ դարձած են, որ նոյնիսկ շաբաթօրեայ Ա. Մանուկեան դպրոցը վտանգի մէջ յայտնուի, որովհետեւ աշակերտութեան թիւը պակսած է զգալի կերպով:

Տ. Ինչո՞ւ պակսեր է աշակերտութեան թիւը, օտա՞ր դպրոցներ կը յաճախեն:

Ս. Մ. Այո՛, շաբթուան ընթացքին օտար դպրոցներ կ'երթան, իսկ Շաբաթ օրերը հայկական դպրոց չեն երթար, որովհետեւ կը նախընտրեն մարզական ծրագիրներու հետեւիլ, հանգիստ ընել կամ տարբեր բաներով զբաղիլ: Յաճախ ծնողն է որ պատրաստ չէ այդ ամբողջ ճամբան կտրելու եւ զաւակը դպրոց տանելու: Ինչ կը վերաբերի վարչութեան, մեր ատենապետը՝ Միհրան Լէփէճեան (կրնայ ծանօթ ըլլալ) որ Սուրիոյ վերիվայրումներուն պատճառով Սիտնի գաղթեր էր, միացաւ Միութեան եւ հիմա մեր ատենապետն է: Նախապէս եղած է ՀԲԸՄի Հալէպի (Սուր-

իա) վարչութեան անդամ: Շրջան մը ես էի դիւանապետը, 2015-2018, երբ միաժամանակ Կեդրոնական Վարչական Ժողովը դրամագլուխ տրամադրեց, որ կարողանանք վճարումները ընել: Ունինք բարերար մըն ալ՝ Աւօ Թեւանեան, որ մեր ծախսերը կը հոգայ: Զինք «բարերար» կոչած ենք. ինք 30-ամեակի հանդիսութիւններուն բարերարն է: Իր մասին գրուած է Միութիւն թերթին մէջ:

Գաղութին մէջ դաշնակցականներուն գործունէութիւնը զգալի է, պարզապէս որովհետեւ մեծ է անոնց թիւը, որոնք կուսակցական եւ պետական հարցերով կը զբաղին: Շրջան մը առաջ մեր նահանգապետը՝ Կլատիս Պերէճիքլեան, տարբեր պատճառներով հրաժարեցաւ, հիմա նոր թեկնածու մը ունինք, ոչ որպէս նահանգապետ, այլ Դաշնակցային կառավարութեան խորհրդարանի անդամ՝ Գափթերեան Լիզա, կը յուսանք որ ժամանակի ընթացքին կրնայ պաշտօնի բարձրացում ունենալ: Վերջին ընտրութիւններուն, որոնք տեղի ունեցան 3 Մայիսին, բարեբախտաբար կրցայ քուէարկել, որովհետեւ քուէարկութիւնը մեր քով պարտադիր է – հակառակ որ ժողովրդավար պետութիւն է – բայց քուէարկելը պարտադիր է:

Տ. Ի՞նչ քուէարկութիւն էր:

Ս. Մ. Դաշնակցային կառավարութեան federeal government, ուր աշխատաւորներու կուսակցութիւնը դարձեալ մեծ քուէներով շահեցաւ: Բայց Լիզան ընդդիմադիր կուսակցութեան անդամ է եւ liberal է:

Երբ կը դիտենք 60 տարի առաջուան գործունէութիւնը, կը տեսնենք որ իսկապէ՛ս «փաշա» մարդիկ ունէինք, որոնք հիմա չկան: Բարեբախտաբար տակաւին կա՛ն ազգասէրներ, որոնք նուիրուած են եւ կը հաւատան բարեգործութեան: Ես անձնապէս կը հաւատամ Բարեգործականին եւ ատիկա ընտրութեամբ ըրած եմ: Երբեմն ինծի կը հարցնեն՝ «Դուն քեսապցի չե՞ս, պէ՛տք է դաշնակցական ըլլաս...»: «Ես հա՛յ եմ», մի՛շտ եղած է իմ պատասխանս: Այս պատասխանիս համար ընդունուած եմ որպէս հայ:

Դժբախտաբար կայ նաեւ պայքարը, որ զգալի է, որպէս ներքին պայքար՝ ես դաշնակցական եմ, դուն չես եւ այլն: Եկեղեց-



ւոյ դիրքը անշուշտ հաւասարակշռուած է, որովհետեւ եկեղեցին չի կրնար զատողութիւն ընել:

Ժամանակ մը Նոյնիսկ Կիլիկիոյ Աթոռին հետ կապուած հարց եղաւ, թէ հոն կրնա՞ն եկեղեցի բանալ թէ ոչ. որովհետեւ մեծ հող մը ունէին: Ժամանակ մը մօտեցանք, որպէսզի դպրոցները միացնենք, Սակայն ի՞նչ միջոց ալ որ առաջարկեցինք, չկրցանք յաջողցնել, որովհետեւ իրենք իրենց պայմանները կը դնէին, եւ փոխանակ ազգային- մշակութայինը նկատի առնելու, դրամական հարցերու ետեւէն էին, որովհետեւ մեծ պարտք մը ունէին: Այդ խնդիրը ջուրը ինկաւ, իրենք ալ հողային որոշ տարածք մը կորսնցուցին, որպէսզի կարենան կացութիւնը փրկել:

Hay Corp անունով շինարարական մեծ կազմակերպութիւն մը իրենց հետ համաձայնութեան եկաւ եւ հողին բաժանում կատարեց, իսկ Hay Corp-ը իրենց պարտքերը վճարեց:

Իրենք մեծ ծախսերու տակ ինկած էին, որովհետեւ իրենց դպրոցը երկրորդական բաժին ալ ունի, իսկ երկրորդականին ծախսերը շատ մեծ են: Մեր դպրոցը միայն նախակրթարան է. թէեւ մեր ալ ծախսերը մեծ են, բայց Նոյնքան մեծ չեն: Նոյնիսկ եթէ մէկ աշակերտ ունիս, անոր համար պէտք է դասարան բանաս:

Պէտք է ըսել նաեւ, որ Դաշնակցային կառավարութիւնն ու նահանգայինը աշակերտին համար դրամագլուխ կը վճարեն. այդ դրամագլուխը եթէ չըլլայ, բոլոր դպրոցներն ալ կրնան գոցուիլ, այնքան որ ծախսը մեծ է: Մէկ աշակերտի համար 10-11 հազար տոլար կու տան տարեկան: Որքան աւելի աշակերտ ունենաս, այնքան աւելի դրամ կը ստանաս պետութենէն, որուն դիմաց պէ՛տք է որոշ պայմաններ ստեղծես, օրինակ եթէ «անկարող» աշակերտներ կան, անոնց համար պէ՛տք է մասնաւոր դասարան տրամադրես, ելքն ու մուտքը պէտք է որ ազատ ըլլան եւ այլն:

Մենք հիմա Նոր գրադարան մը կը պատրաստենք, որուն համար կառավարութեան դիմեցինք, որովհետեւ երբեմն դրամաշնորհներ կը տրուին, կարելի է դիմել եւ շինարարութեան համար գումար

ստանալ: Շինարարութեան 75 %-ը կառավարութիւնը կու տայ, մնացեալը մենք պէտք է ապահովենք: Նկատի ունենալով որ գումար ունէինք, սկսանք Նոր գրադարանի մը եւ երկու դասարաններու (որոնց կարիքը ունէինք) շինութեան: Գրադարանին համար մեզի 700 հազար տրամադրուեցաւ, իսկ դասարաններուն համար՝ 450 հազար: Ասոնց բացումը կրնայ ըլլալ որ մեր Նոր նախագահը ընէ:

Տ. Նոր գրադարանին համար անուն որոշե՞ր էք:

Ս. Մ. Տակաւին ոչ. պիտի նայինք, ըստ նուիրատուներուն կամ այլ նկատառումներով անուն մը... Մեր դպրոցն ալ բաւական հեռու է, այսինքն բանուկ միջավայրէն քիչ մը հեռու է: Բայց որպէսզի կարենանք աշակերտներ սիրաշահիլ, երեք հանրակառք (bus) տրամադրած ենք, որոնք արդիւնք տուին:

10-15 տարի առաջ Կեդրոնական Վարչական ժողովը տարեկան 100 հազար ամերիկեան տոլար կը տրամադրէր: Բայց ատիկա դադրեցաւ, որովհետեւ արդիւնք չէին տեսներ: Մեր աշխատանքով կրցանք վերազարթօնք մը ընել եւ հիմա նիւթապէս ինքնաբաւ կը նկատուինք:

Տ. Հաւանաբար դուք Սփիւռքի միակ գաղութն էք, որուն դպրոցը ինքնաբաւ կը նկատուի:

Ս. Մ. Այո, Նոյնիսկ նախկին նախագահ Պերճ Սեդրակեանը մեր դպրոցը օրինակ բերած եւ ըսած էր՝ Սփիւռքի բոլոր վարժարանները պէտք է Սիւնիի վարժարանին նման ըլլան... Նոյնիսկ երբ դպրոցներ փակելու տրամադրութիւններ ունէին, մեզ շրջանցեցին, որովհետեւ ըսին՝ եթէ բոլոր ծախսերը դո՛ւք պիտի ընէք, կրնաք դպրոցը պահել...

Շնորհակալութիւն տրիար Սարգիս Մանուկեանին այս գրոյցին համար, որ մեզի բացայայտեց հեռաւոր գաղութի մը կեանքին եւ դպրոցին մանրամասնութիւնները, զորս այլապէս պիտի չիմանայինք:

Բարի վերադարձ եւ առողջութիւն կը մաղթենք պարոն Ս. Մանուկեանին:

Զրոյցը վարեց՝ Մ.Ե.



Նոր Հրատարակություն

«ԿԱՐԵԼԻ՞ Է ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ ՓՐԿԵԼ ԱՅՍՕՐՈՒԱՆ ՑԱԻԱԼԻ ՎԻՃԱԿԷՆ» *Պերճ Թերզեան*

2025 թուականի առաջին ամիսներուն Գահիրէի մէջ լոյս տեսաւ եգիպտահայ մտաւորական Պերճ Թերզեանի հերթական գրքոյկը՝ «Կարելի՞ է արեւմտահայերէնը փրկել այսօրուան ցաւալի վիճակէն» խորագրով:

Արեւմտահայերէնի ցաւալի վիճակը, մանաւանդ դպրոցներէն ներս, գրեթէ քառորդ դարէ ի վեր դարձած է մտահոգութիւնը Պ. Թերզեանի, որ ճիգ եւ միջոց չի խնայեր դարման մը գտնելու համար այս խիստ էական հարցին:

Արեւմտահայերէնի վիճակը բարեւալելու միջոցներէն գլխաւորը արեւմտահայերէն լեզուի մասնագէտ ուսուցիչներու պատրաստութիւնն է, որուն նուիրուած է այս գրքոյկը:

Գրութիւնները, որոնք խմբուած են երեք գլխաւոր գլուխներու տակ - որոնցմէ առաջինը ամենէն ծաւալունն է՝ բաժնուած 16 մասերու, եւ գլխաւոր հարցերը կ'արծարծէ - գրուած են խիստ սրտցաւութեամբ, որովհետեւ «արծարծուած հարցերը նորութիւն չեն եւ բազմիցս քննարկուած են Սփիւռքի մէջ հայեցի կրթութիւն ջամբող տարբեր կառոյցներու կողմէ, առանց սակայն շօշափելի եւ մնայուն արդիւնքներու հասնելու»:

Հեղինակը մտահոգող այլ երեւոյթ-հարց մըն է «Սփիւռքահայութեան ճնշող մեծամասնութեան գահավէժ ընթացող ծովումն ու անոր հետեւանքով իր ինքնութեան գիտակցութեան կորուստը»:

Հեղինակը Սփիւռքը կը բաժնէ գլխաւոր երկու միաւորներու, «որոնցմէ առաջինը կը հաւատայ թէ առանց մայրենի լեզուի իմացութեան կարելի չէ ամբողջական հայկական ինքնութիւն ունենալ: Երկրորդը կը պնդէ, թէ մայրենի լեզուին չտիրապետելով հանդերձ, ինք հայ կը զգայ եւ ինքզինքը հայ կը դաւանի»:

Ապա որոշ լուծումներ առաջարկելէ ետք, ԺԶ բաժնին մէջ հեղինակը կը ճշդէ՝ «Ներկայ գրութիւնը փորձ մըն է ժամանակակից արեւմտահայերէնի վատթար վիճակը ներկայացնելու Սփիւռքի մեր ղեկավարներուն»:

Ապա կը ներկայացուին Սփիւռքի ա'յն կառոյցներն ու անձերը, որոնց ղրկուած է այս գրքոյկը: Ցանկը կը գլխաւորեն Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ., Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. եւ Գերերջանիկ Կաթողիկոս-Պատրիարք Կաթողիկէ Հայոց Տէր Ռաֆայէլ Պետրոս 21րդ:

Ցանկը կը փակուի երեք կուսակցութիւններով:

Գրքոյկին երրորդ բաժինը հեղինակին արտասանած խօսքն է՝ «Հայեցի դաստիարակութեան վիճակը Եգիպտոսում այսօր», 2010 թուականին «Արեւմտահայերէնի ուսուցման վիճակը Սփիւռքում» խորագրուած եւ Ծաղկաձորի մէջ կայացած համաժողովի ընթացքին:

Հետաքրքրական է սակայն գիտնալ, թէ արեւմտահայերէնին մասին գրուած նման գրքոյկ մը, ի՞նչ արդիւնք կրնայ տալ, ի՞նչ են հեղինակին սպասումներն ու յոյսերը այս առնչութեամբ:



**Ներկայ տարուան սկիզբները լոյս տեսաւ «ԿԱՐԵԼԻ՞ Է ԱՐԵՒՄՏԱ-
ՀԱՅԵՐԷՆԸ ՓՐԿԵԼ ԱՅՍՕՐՈՒԱՆ ՑԱԽԱԼԻ ՎԻՃԱԿԷՆ» գրքոյկը,
հեղինակութեամբ եգիպտահայ մտաւորական Պերճ Թէրզեանի:**

**Սոյն գիրքը ընթերցողներու մօտ գտած է դրական ընդունելութիւն
եւ բազմաթիւ բանաւոր եւ գրաւոր կարծիքներ յայտնուած են անոր
մասին:**

**Կը հրապարակենք նմոյշ մը յայտնուած կարծիքներէն, զոր արտա-
յայտած է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմագիտութեան դոկտոր-
փրոֆէսոր Ալբերտ Խառապեան:**

Երեւան, 7 Յունիս 2025

Յարգելի՛ Պ. Թէրզեան,

Կարդացի Ձեր «Կարելի՞ է արեւմտահայերէնը փրկել այսօրուան ցաւալի վիճակէն»
աշխատութիւնը: Այն գրուած է յոյժ հայրենասիրական ոգով, հիմնախնդրի ըստ ամե-
նայնի իմացութեամբ, դրա նկատմամբ խորին մտահոգութեամբ ու տազնապով: Շատ
հետաքրքիր եւ գործնական են, կարծում եմ, Ձեր առաջարկները՝ խնդրի լուծմանը
դրականօրէն նպաստելու եւ Սփիւռքի ու հայրենիքի ուշադրութիւնը այս կարեւորագոյն
հարցի վրայ բեւեռելու տեսակէտից:

Ես դպրոցի եւ մանկավարժութեան մասնագէտ չեմ, սակայն ընդհանուր իմաստով
մօտենալով Ձեր առաջարկներին, կարծում եմ, որ դրանք խելամիտ բնոյթ ունեն եւ այս
կամ այն յաւելումներով ու ճշդումներով ունեն գործնական նշանակութիւն եւ կարող
են կիրառուել հիմնախնդրի համազգային եւ միասնական գործակցութեան պայման-
ներում: Այդ դէպքում միայն կարող են իրականութիւն դառնալ Ձեր ազնիւ ջանքերը՝
մեր իրօք խոնարհուած արեւմտահայերէնը վերջնական անկումից փրկելու ուղղութեամբ:
Ինչ վերաբերում է Ձեր ծրագրի գործնական կողմին, թող ներուի ինձ կրկնել, որ այն
չի կարող լիարժէք լինել առանց մայր Հայրենիքի անվերապահ աջակցութեան ու գոր-
ծակցութեան: Եւ այստեղ հարց է առաջանում՝ իսկ ինքը՝ Հայրենիքը, ներկայումս կա-
րո՞ղ է ստանձնել այդ առաքելութիւնը, որին Դուք հաւատում էք եւ բաւական դերակա-
տարում էք յանձնարարում Ձեր գործնական առաջարկների իրացման գործընթացում:
Թոյլ տուէք դրան կասկածել «մեր» իշխանութիւնները իրենց գործունէութեամբ իրենք
են գլխաւոր խոչընդոտն ու արգելակողը Հայրենիք-Սփիւռք գործակցութեան: Նրանց
առաջին քայլերից մէկը եղաւ Սփիւռքի նախարարութեան վերացումը եւ նրա բարդ ու
բազմակողմանի գործառոյթները մէկ մարդու վերածումը, որի գործունէութիւնը ի դէմս
գլխաւոր յանձնակատարի, Սփիւռքում տեսանելի չէ՝ իր առեղծուածային խորհրդաւո-
րութեամբ հանդերձ: Ելնելով վերոյիշեալից, ես կ'առաջարկեի «ազգի աշխարհական
պատասխանատուների» ցանկից հանել «տիար» եւ «տիկին» իշխանաւորներին, որն
այս պարագային իրականում որեւէ բանով չեն առնչուում Ձեր ազգանուէր ծրագրին:
Սփիւռքը ստիպուած պէտք է բաւարարուի Հայաստանի մտաւոր եւ ստեղծագործական
կառոյցների, ինչպէս եւ անհատ գործիչների հետ համատեղ աշխատանքով: Ըստ այդմ,
կարելոր եմ համարում սփիւռքահայ դպրոցների կապերը Հայաստանի հետ, ամա-
ռային եւ այլ դասընթացները, հայրենական դպրոցների եւ Սփիւռքի ուսուցիչների հա-
մաժողովները՝ կուսակցութիւնների ներգրաւմամբ եւ այլն:

Ահաւասիկ այն ամէնը, ինչ կարող եմ ասել:

Խորին յարգանքով եւ Ձեր քաջառողջութեան մաղթանքներով՝

Ա. Խառապեան



ԳՈՐԾՆ Է ԱՆՄԱՀ

12 Մայիս 2025-ին Աղեքսանդրիոյ Գեղարուեստի Համալսարանին մէջ բացումը ազդարարուեցաւ եւ շաբաթներ պիտի ցուցադրուին Սարուխանի այն ստեղծագործութիւնները, որոնք ծնունդ առած են Աղեքսանդրիա, «Դիմանկարներ Աղեքսանդրիայէն» խորագրին տակ: Ցուցադրութիւնը կը ներկայացնէ մեծ ծաղրանկարչին գծանկարները, զորս կարծես ինքը շատ ալ չէ արժէքաւորած: Պզտիկ թղթի կտորներու վրա մատիտի կամակոր շարժումներու արդիւնք եղած են այս 80 գծանկար-ծաղրանկարները: Հեղինակը հաւանաբար այդ պահուն եկած միտքերը նշումներու պէս, սղագրութեան մը պէս գծած է, որ չմոռնայ՝ գուցէ գործածէ օր մը: Սակայն պզտիկ թղթիկներն այսօր քիչ մը մեծցուած եւ գնահատուած, բազմած են Աղեքսանդրիոյ Գեղարուեստի Համալսարանի գեղեցիկ սրահին մէջ եւ իրենց շուրջն են ժողոված մեծ բազմութիւն, որ հարուստ է արուեստագէտ եւ արուեստասէր, ինչու ո՛չ նաեւ Սարուխանասէր ու Սարուխանագէտ մարդկանցով՝ ուսանողներ գիտութեան եւ կրթութեան շրջանակէն, մասնագէտներ... Հարկաւ այն մարդկանցով, որոնք կը սիրեն կեանքը, կը սիրեն ժպիտն ու խնդուքը: Մարդիկ, որ իւրաքանչիւր խնդուքի մէջ ալ գաղափար ու իմաստ կը տեսնեն: Համարձակօրէն կ'ըսենք, որ մէկ դար առաջ՝ 1927-ին Աղեքսանդրիոյ մէջ բացուած էր Սարուխանի այս 80 գործերու ցուցադրութիւնը: Պատմութիւնը կրկնուելու սովորութիւն ունի:



Սարուխան եկած է աշխարհ, ապրած է իր բերնէ-բերան լեցուն կեանքը, ստեղծագործած է, գնահատուած է, սերունդներուն թողած է հսկայական ժառանգութիւն եւ հեռացած է յաւերժութեան մէջ՝ վայելելու իր փառքը: Ժառանգութիւն, որ հանգիստ չի տար արուեստը հասկցող եւ գնահատող անձերուն: Պատմութիւնը շատ ստեղծագործողներ տեսած է, սակայն քիչերուն բախտ վիճակուած է այսքան մեծ ժողովրդականութիւն վայելել: Կը կարծեմ թէ Սարուխան այն մեծերէն է, որոնք անմահ են: Անոր ստեղծագործութիւնները ոչ միայն համահունչ են այսօր, այլեւ եղած են ուսումնասիրութեան առարկայ, գիտական թեզերու նիւթ, գիրքեր, գիրքեր: Դարձեալ հպարտ ըլլալու առիթը ունինք, քանզի անոր մասին նոր գիրքեր լոյս տեսած են, նոր ցուցադրութիւններ եղած են, որոնք ձեռնարկած են նաեւ օտարներ: Համալսարանի ցուցադրութիւնն ալ նուիրուած է ծննդեան 125-ամեակին եւ նոր լոյս տեսած գիրքին: Պարզ ցուցադրութիւն ըլլալէ զատ, եղան նաեւ դասախօսութիւններ Սարուխանի



կեանքին, ստեղծագործական գործունեության, տպագրուած գիրքերուն եւ մամուլի մէջ աշխատած տարիներուն մասին: Հոգիս փառաւորուեցաւ, երբ նոր գիրքին հեղինակը՝ պրն. Ապտալլահ Էլ Սաուին ուսանողներուն, համալսարանի փրոֆէսորներուն եւ բոլոր մասնակիցներուն ներկայացուց Սարուխանը, գործերը, ընտանիքը, արմատներով հայ ըլլալը:

«Պատերազմը եւ ծաղրանկարը» թեմայով դասախօսութիւնը հիացմունք եւ զարմանք սփռեց լսողներուն աչքերուն մէջ՝ ինչպէ՞ս կրնար աշխարհակործան պատերազմը ծաղրանկարի առիթ ըլլալ: Սարուխանի մեծ ըլլալը այն է, որ կրցած է ծաղր ու խնդուք տեսնել ամենէն անսպասելիին մէջ: Օտար երկրի մը մէջ, որքան մեծ պիտի ըլլայ արուեստագէտը, որ այսպէս գնահատուի, անուն վաստկի եւ յիշուի մահէն ալ ետքը: Եթէ օտարներն ալ կը հետաքրքրուին անոր գործերով, անգամ մը եւս պէտք է վստահ ըլլանք, որ Սարուխան անվիճելիօրէն անմահ մեծութիւն մըն է: Հայու այսպիսի կերպարը բացառութիւն չէ մեր մէջ, սակայն հաճելի է, հպարտութիւն է:

Այլեւս սովորութիւն է Սարուխանի բոլոր յօբելեանները նշել նոր ժողովածոներով եւ ցուցադրութիւններով: Եւ 125-ամեակի այս ձեռնակներուն նախաձեռնողը օտար պատմաբան մըն է, որ իր խօսքով ըսած՝ միայն Սարուխանը ճանչնալէն ետքը դարձաւ արուեստագէտ՝ ծաղրանկարչագէտ եւ ծաղրանկաները պահպանելու կեդրոնի հեղինակ: Ան ձեռնարկած է կեդրոն մը, ուր պիտի պահպանուին եւ ոչնչացումէ, կորուստէ փրկուին մինչ օրս ստեղծուած բոլոր ծաղրանկարները: Պրն. Ապտալլահ Էլ Սաուին հեղինակ է նաեւ Սարուխանի մասին 2 գիրքերու, ժողովածոներ, որոնք կը պարունակեն նկարիչին տարբեր շրջաններու եւ տարբեր թեմաներու ստեղծագործութիւնները: Յոգ գիրքը շուտով լոյս կը տեսնէ ՀԲԸՄի հովանու ներքոյ: Համալսարանի ղեկավարութիւնը շնորհակա-



լութեան եւ շնորհաւորանքի յուշանուէրներ յանձնեց պրն. Ապտալլահ Էլ Սաուին, Սարուխանի թոռնուհի Սիլվա Ներետեան-Բլատեանին եւ ՀԲԸՄիութեան Գահիրէի մասնաճիւղի ատենապետ դոկտ. Ճորճ Սիմոնեանին:

Այո՛, 125 տարեկան է Ալեքսանդր Սարուխան, բայց ամէն օր մամուլի, թէ ուղղակի խօսքի մէջ կը լսենք իր մասին, կը դիտենք Սարուխանի երգիծանկարները: Ան ստեղծագործած է անցեալ դարուն մէջ, սակայն արդիական է ու մերօրեայ: Դեռ շատ ցուցադրութիւններ պիտի ըլլան, շատ գիրքեր լոյս պիտի տեսնեն, գիտական թեզեր պիտի գրուին Սարուխան արուեստագէտին եւ անոր ստեղծագործութիւններուն շուրջ: Եթէ արուեստագէտը այսօր ալ մեզի հետ է, կը նշանակէ ժամանակակից է նաեւ այսօր, նաեւ վաղը՛, նաեւ գալիքին...

**Անժիկ Յակոբեան Կանիմեան
Ալեքսանդրիա**



ՍԱՐՈՒԽԱՆ ՍՓԻԻՌԻ ՄԱՍԻՆ

Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին մէջ պահուած Հայկ Արամեանի արխիւէն (թիւ 175, էջ 30/ա) կը գտնենք փոքրիկ նշխար մը Ալեքսանդր Սարուխանէն, որ թուական չունի դժբախտաբար, սակայն կրնայ գրուած ըլլալ Սարուխանի կեանքին վերջին տասնամեակին: Իր շահեկանութեան համար կը ներկայացնենք ամբողջութիւնը այդ գրութեան, որուն մէջ յստակօրէն կ'երեւին Սարուխանի սուր միտքն ու պայծառամտութիւնը:



Սփիւռքը նաւ մըն է: Ո՛չ ղեկ, ոչ ալ նաւավար ունի ան: Ահեղ փոթորիկէ մը հրաշքով փրկուած հայեր ապաստան գտած են հոն: Ժամանակի ընթացքին անոր վրայ կառուցուած են եւ դեռ մինչեւ այսօր կը շարունակեն կանգնել շէնքեր, վարժարան, եկեղեցի, ակումբ եւ այլն, դիզած են նոյնիսկ հարստութիւն:

Այդ նաւուն վրայ ամէն ոք կրնայ աշխատիլ, արտադրել, ծովանալ, լալ կամ գուարճանալ, յաջողիլ կամ ձախողիլ: Ստեղծել մշակութային բեղուն կեանք, իր տուրքը տալ մարդկային քաղաքակրթութեան: Կրնան նոյն իսկ, մնալ անտարբեր, կրնան օգնել կամ փոս փորել իրարու:

Հէքեաթային, անմեկնելի եւ անիրական աշխարհի մը վերջապէս՝ ուր ներելի է շատ բան, մինչեւ իսկ հիւսել շատ գեղեցիկ երազներ... Նախարարական աթոռներէն մինչեւ... թագաւորական գահը: Ամէն ոք կրնայ շրջանը ընել անոր, դառնալ աջ կամ ձախ, ետ կամ առաջ, երթալ անոր մէկ ծայրէն միւսը՝ Քանատայէն Աւստրալիա, Հիւսիսային Ամերիկայէն՝ Հարաւայինը, մէկ բեւեռէն միւս բեւեռը:

Աւելի ճիշդը՝ կարծել թէ կ'երթայ այդ երկիրները: Պատրանք: Գիտակցաբար կամ ոչ, կամայ թէ ակամայ՝ բոլորը կ'երթան մէկ տեղ միայն: Դէպի յատակը ծովուն: Հոն, ուր իրենցմէ շատ առաջ գացած են ուրիշներ:

Որովհետեւ այդ նաւը, անզգալաբար, դանդաղօրէն, բայց անշեղօրէն ընկղմելու վրայ է ամէն օր, քիչ, քիչ:

Ալ. Սարուխան

Ո՛Վ Է ՄԵՂԱԽՈՐ

«Սուրիահայ ընտանիք մը հայկական եւ արեւելեան ուտելիքներու խանութ բացած է Հելիոպոլսոյ մէջ», բերնէ-բերան լուրը տարածուեցաւ գաղութին մէջ: Ինիսունական թուականներուն սկիզբն էր, երբ արդէն տարիներէ ի վեր, քանի մը հայ նպարավաճառներէ զատ, եգիպտոսի ուտելիքի ասպարէզէն հայերը շատոնց կը բացակայէին:

Հետաքրքրութեան եւ ուրախութեան ալիքներուն մակընթացութիւնը հելիոպոլսաբնակ հայերը խոռոչներամ մղեց դէպի այս նորաբաց խանութը: Օրն ի բուն գործի գլուխ էին այր եւ կին, օգնական ունենալով իրենց որդին եւ երկու դուստրերը:

Համեղ ուտելիքները, մատչելի գինները եւ մաքուր ու ընտիր ապրանքները նպաստեցին, որ յաճախորդներուն թիւը բազմապատկուի շատ կարճ ժամանակի ընթացքին: «Սեւան Խոհանոց»ին ուտեստեղէնը սկսած էր իր վայելուչ տեղը գրաւել հիւրասիրութիւններու սեղաններուն վրայ:

Այր ու կին կիրթ ու զուսպ էին իրենց նոր շրջապատի անդամներուն հանդէպ եւ մենք՝ եգիպտահայերս ալ շատ սիրալիր ու անմիջական կերպով կը վարուէինք այդ պանդուխտ ընտանիքին հետ: Շատ յաճախ, փոխանակ ուտելիքը առնել տուն երթալու, հոն իրենց քով կը նստէինք կ'ուտէինք ու կը խօսակցէինք: Հայ խանութպանի հետ զրուցելու կարօտը կը քաշէինք:

Գործերը լաւ ճամբու մէջ էին ու անոնք սկսած էին մօտէն ճանչնալ գաղութին անդամները՝ որոնք էին հարուստ ընտանիքները, օգնելու տրամադիրները ո՛վքեր էին, որո՞ւ վրայ կրնային յենիլ դժուարութեան ժամանակ, ո՞ր ընտանիքը յարմար փեսացու կամ հարսնցու ունէր...:

Կամաց-կամաց սկսան գանգատներ սահեցնել իրենց սիրալիր խօսակցութիւններուն ընդմէջէն եւ պահանջներ ակնկալել եգիպտահայ գաղութէն:

«Եղբայր, հարուստ է, բայց հաշիւին



ժամանակ մէկ ոսկիի համար սակարկութիւն կ'ընէ Պր. Սեդրակեանը, դուք ո՛ւր, ան ուր», քրթմնջաց Պր. Սեւանը:

«Ճիշդ է որ գործի մէջ շատ պէտք ունինք մեր զաւակներուն, սակայն ի՞նչ ապագայ կը պարզուի անոնց դիմաց, աղջիկ կամ տղայ կու տա՞ն մեզի պէս մարդոց», մրթմրթաց տիկին Սեւանը, երբ լսեց Մարկոսեանին աղջկան փայլուն ամուսնութեան լուրը: «Անիկա **փեթրուլի** ընկերութեան մէջ լաւ գործ ունի, հարկաւ աղուոր ամուսնութիւն մը կ'ընէ, իսկ մեր զաւակները Հալէպէն եկան որ **մաղպանո՞ս** ջարդեն հոս...», աւելցուց ան յուսահատ շեշտով:

«Գործ սկսելու ժամանակ Բամպակեանէն յիսուն հազար ոսկի պարտք առի 15% տոկոսով», սկսաւ Պր. Սեւանը լալազին ձայնով: «Շա՛տ է, մէջքերնիս կը կոտրէ. դուք չէ՞ք կրնար մեզի լաւութիւն մը ընել, մեր պարտքը գոցել եւ կը խոստանանք մաս-մաս ետ տալ ձեր գումարը», աւելցուց ան հանճարեղ լուծում մը գտած իր դժուարութեանը:



«Մենք ալ մարդ ենք, հոգի ունինք, կը լսենք Սոխնա անուն մօտիկ ծովափին մասին, շատ կը փափաքինք երթալ, ինքնաշարժ չունինք, մեզի փոխ կու տա՞ք ձերը...», առանց ամջնալու առաջարեց կինը այն օրը, երբ տեսաւ մեր երկրորդ ինքնաշարժը:

«Զարմանալի մարդիկ են այս եգիպտահայերը», կ'ըսէր Պր. Սեւան, կարծէք թէ մենք եգիպտահայ չըլլայինք, «ապսպրանքը կ'ընեն, ստանալու ժամանակը կ'որոշեն, խստիւ կը պնդեն որ պատրաստ ըլլայ երբ որ գան ու անհոգ-անհոգ կէս ժամ եւ երբեմն նոյնիսկ մէկ ժամ ուշ կու գան կ'առնեն զայն», հեգնանքով աւելցուց ան:

Այս տեսակ ակնարկութիւններ, գանգատներ ու պահանջներ անշուշտ միայն մեզի չէին ըներ, քանի որ ուրիշ յաճախորդներ եւս մեզ նման սկսան կարճ կապել իրենց յարաբերութիւնը այս ընտանիքին հետ, զուտ առեւտուրի վերածելով զայն՝ «ապրանքս տուր, դրամդ առ» դրութեամբ:

«Առաջ կու գայիք մեզի հետ կը նստէիք ... ի՞նչ եղաւ», հարցուց կինը, երբ ուտելիքին ծրարը առած կ'աճապարէի դէպի ինքնաշարժ: «Տեղ ունինք երթալիք», ըսի ու գացի:

Ուրիշ օր մըն ալ «ամուսինդ այլեւս եկած չունի ... խէր ըլլայ», ըսաւ Պր. Սեւանը: «Զբաղած է, գործի է...», ըսի: «Է՛,

գործերը լաւ կ'երեւին... Աստուած աւելի եւս յաջողութիւն տայ իրեն, միայն թէ չ'ուզեր մեզի օգնել...», ըսաւ ամբարտաւան շեշտով:

Չափը-սահմանը անցած էր այլեւս: Նոյնիսկ իրենց ուտելիքները կորսնցուցած էին իրենց հոտն ու ախորժաբեր համր: Հրաժարեցանք «Սեւան Խոհանոց» երթալէ ու մեզ նման շատեր: Երբեմն, ճամբուս վրայ կ'անցնէի խանութին առջեւէն, որ յաճախորդէ զուրկ ու մութ էր:

Զատիկի օրը եկեղեցին դէմ-դիմաց ելայ Սեւան ամուլին հետ, փախուստ չունէի, «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» մը արտասանեցի ուրախ ժպիտով: «Մեր գործը յարեաւ եղաւ...», ըսաւ Պր. Սեւան այնպէս յանդիմանական շեշտով, կարծէք մենք եղած էինք իրենց գործին ճախողութեան պատճառը: «Աստուած ձեզի յաջողութիւն տայ ձեր ապագայ գործերուն մէջ», ըսի, վստահ ըլլալով որ յաջողութիւնը միշտ խոյս պիտի տայ իրենցմէ: Մարդ պէտք է գիտակցի, թէ ինչպէս որ ինքն է պատճառը իր յաջողութեան, նոյնպէս ալ ինքը կ'ըլլայ պատճառը իր ճախողութեան:

Կ'ուզէի աւելցնել՝ «մեղքը ձեր վիզը», բայց ինքզինքս զսպեցի ու հեռացայ...:

Սօսի Ներքերեան-Յակոբեան
Յունիս 2025

ԹԻԻԵՐ

«Եգիպտահայ Տարեցոյց»ի 1926 տարեգիրքին էջ 45-ին վրայ կը կարդանք «Բաղդատական Ցուցակ» մը, ուր ներկայացուեր են 1893-1924 թուականներուն Գահիրէի մէջ ամուսնացածներուն, մկրտուածներուն եւ մահացածներուն թիւերը:

1893-ին ամուսնացեր է 4 զոյգ, մկրտուեր 17 տղայ եւ 17 աղջիկ, եւ մահացեր 37 անձ:

1924-ին ամուսնացեր է 102 անձեր, մկրտուող չէ եղեր, մահացեր է 135 անձ:

Հետաքրքրական է տեսնել թէ հարիւր տարի ետք՝ 2024-ին ի՞նչ թիւեր կան այսօր Գահիրէի հայ գաղութին մէջ:

Մկրտութիւն՝ 2 (չէ ըսուած անոնց սեռը), պսակադրութիւն՝ 3, թաղում՝ 17:

Աղեքսանդրիոյ գաղութին մէջ՝ դժբախտաբար ո՛չ պսակադրութիւն, ո՛չ մկրտութիւն, միայն 6 թաղում:

ՍԱՐԳԻՍ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ ՄԱՀԸ

ՀԲԸՄիությանը կը սգայ իր Կեդրոնական Մարմինի նախկին վարչական, Հոգաբարձական Խորհուրդի անդամ, արդիւնաբերական մարզի փայլուն գործարար եւ բարերար Սարգիս Տէմիրճեանի մահը Լիբանանահայ համայնքի պատկառելի անձնատւութիւններէն, նուիրաբերութեան տեսլականով օժտեալ բարերար, պողպատի արդիւնաբերական մարզի փայլուն գործարար Սարգիս Տէմիրճեան, կեանքէն կը հեռանար 2025-ի Յունիսի 8-ին, իր ետին ձգելով սերունդներու վրայ տարածուող մնայուն հարուստ աւանդ մը: Տէմիրճեան ընտանիքի **Տէմքօ** հսկայածաւալ ընկերութեան գործունէութիւնը հմտութեամբ ղեկավարելու իր ծանր պատասխանատւութեան առընթեր, հանրային կեանքի մէջ իր գործօն դերակատարութիւնը, իր վայելած բարձր վստահութիւնը եւ բարեհամբոյր ոգին, համակրելի իր անձին գլխաւոր արժանիքները կը կազմէին:

Ծնած էր Հալէպ, ապա փոխադրուած Լիբանան, ուր ինք եւ իր ազնիւ տիկինը Սեդան, որպէս համայնքի ազդեցիկ դէմքեր, նախանձախնդիր եղած էին ստեղծելու գիտակից նոր սերունդի դաստիարակութեան եւ բարձր կրթութեան լաւագոյն առիթներ եւ ծրագիրներ, զանոնք որպէս յաջող եւ մրցունակ աշխարհաքաղաքացիներ պատրաստելու նպատակով: Անոնց բարերարական ծրագիրներու լայնածիր եւ բազմերես բնոյթը, ինքնին դրսեւորումն է անոնց մարդասիրական ոգին եւ իրենց վայելած բարիքներուն համայնքը բաժնեկից դարձնելու բաժրոգութեան:

ՀԲԸՄի Նախագահ Սէմ Սիմոնեան, որ Կեդրոնական Վարչութեան որպէս ադամ, նաեւ որպէս բարեկամ, անձամբ մտերմութիւնը վայելած էր հանգուցեալին, անոր մասին կ'արտայայտուէր ըսե-



լով՝ «Սարգիս Տէմիրճեան Լիբանանի մէջ ծանօթ անուն մըն է, ձեռով մը ժողովրդային հերոս մը, թէ լիբանանահայ համայնքին եւ թէ լիբանանեան լայն շրջանակներուն համար: Ան իր յատուկ հմայքով եւ հեղինակութեամբ, կարողութիւնը ունէր նիւթական կարելիութիւնները եւ ազդեցութեան լծակները գործածելու ի շահ բարեսիրական կարելոր նպատակներու: Ան

իր գործարարական առասպելային հմտութեամբ լայն համբաւ կը վայելէր եւ յարգուած էր որպէս համայնքային առաջնորդ դէմք: Զիս խորապէս տպաւորած էր յատկապէս իր համեստութենէն բխող լուռ պատկառանքը, որ ան կը պարտադրէր իր շրջապատին»:

Սկիզբի Տարիներ

1947-ին ընտանեօք Սուրիայէն Լիբանան փոխադրուելէ ետք, Սարգիս Տէմիրճեան 1952-ին ֆրանսական պաքաւորիա կը ստանայ **ժըմէյզիի Գուլէժ Տէ Ֆրէր** վարժարանէն: Իսկ 1957-ին Պէյրութի Ամերիկեան համալսարանէն կը վկայուի որպէս շինարար ճարտարագէտ: Տարի մը ետք ան կը միանայ իր հօր Երուանդ Տէմիրճեանի **Երուանդ Տէմիրճեան եւ Որդիք** ընկերութեան, որ պողպատի արդիւնաբերական կարելոր նախաձեռնութիւն մըն էր: Իր հօր Երուանդ Տէմիրճեանի առաջնորդութեամբ, երիտասարդ Սարգիս Տէմիրճեան իր երկու եղբայրներուն Աւետիսին եւ Յակոբին հետ, կը զարգացնեն ընկերութիւնը, զայն վերածելով **Տէմքօ** պողպատի արդիւնաբերութեան ծաւալուն հաստատութեան, որ նաւահանգիստին մօտ իր նպաստաւոր դիրքով եւ միջազգային փոխադրութեան կարելիութիւններով կը դառնայ պողպատի մշակման եւ արդիւնաբերութեան մեծագոյն ընկերութիւններէն մին, որ կը մատակարարէ գլխաւոր շինարարական ծրագիրներ, ինչպէս Քաղաքակեդրոնը, Մարգահա-



մալիրը, քարիւղի պողպատեայ շտեմարանները եւ Պէյրութի Միջազգային Օդակայանը:

Սարգիս Տէմիրճեան եւ իր տիկինը Սեդան էին որ Տէմիրճեան եղբայրներուն հետ միասին, Լիբանանի քաղաքացիական պատերազմէն ետք յանձն առին հովանաւորել Անթիլիասի մէջ Տէմիրճեան Կեդրոնի գեղակերտ շէնքին իրագործումը, որով ՀԲԸՄը եղաւ առաջինը՝ որպէս կազմակերպութիւն, որ լիբանանեան համայնքին միասնականութիւնը խորհրդանշող նմանօրինակ հաւաքավայր մը կը ստեղծէր որպէս համալիբանանեան կառոյց: Տէմիրճեան Կեդրոնը տասնամեակներէ ի վեր կը շարունակէ ըլլալ մարզական եւ մշակութային աշխոյժ գործունէութիւններու ժամադրավայր մը: 1997-ին, Սարգիս Տէմիրճեան եղած է նաեւ տնօրէն եւ հոգաբարձական խորհուրդի անդամ բազմամիլիառ տոլար արժէքով Սոլիտեր քաղաքաշինական ընկերութեան, որ ստանձնած էր պատերազմէն քարուքանդ դարձած երկրին վերաշինութիւնը:

Ընտանեկան Աւանդի մը Ամրապնդումը

Տարիներու ընթացքին Տէմիրճեաններու ազնւութիւնը եւ առատաձեռնութիւնը, ընտանեկան ժառանգութիւն մը հանդիսացած է, անոր անդամներու ունեցած նշանակելի դերակատարութեամբ, որպէս համայնքի առաջնորդներ եւ բարերարներ: Սարգիսին հայրը՝ Երուանդ Տէմիրճեան, եղած է ՀԲԸՄի Հալէպի մասնաճիւղի, ինչպէս նաեւ Կիւլլապի Կիւլպէնկեան Մայրանոցի հիմնադրամի ատենապետ: Պէյրութ փոխադրուելէ ետք ան ընտրուած էր Գաւառական Ժողովի անդամ, նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսարանի Ազգային Խորհուրդի եւ Շինարարական Յանձնաժողովի անդամ: Ան 18 տարիներ շարունակ եղած է Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ եւ ընտրուած է ՀԲԸՄի Կեդրոնական Վարչութեան անդամ: Տէմիրճեան ընտանիքի բազմաթիւ բարերարական նախաձեռնութիւններէն է նաեւ Լիբանանի մէջ ատենին արդիական **Տէմիրճեան Նախակրթարանի** հիմնումը:

Շարունակելով ընտանեկան աւանդու-

թիւն դարձած բարերարութեան գործընթացը, Սարգիս Տէմիրճեան պատասխանատուութիւններ ստանձնած էր ՀԲԸՄի տարբեր յանձնախումբերու մէջ, ինչպէս ՀԲԸՄի Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան (ՀԵԸ), Ասպետներու Վարչութեան, որուն ատենապետն էր 14 տարիներ շարունակ, նաեւ ՀԲԸՄի Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովին, որուն գանձապահութիւնը վարած էր 15 տարի: 1987-ին ան ընտրուած էր ՀԲԸՄի Կեդրոնական Վարչութեան Անդամ Ժառայելով որպէս Փոխ-Նախագահ 2002-2006: Իսկ 2006-2019 ան անդամ էր ՀԲԸՄի Հոգաբարձական Խորհուրդին:

ՀԲԸՄի Պատուոյ Նախագահ Պերճ Սեդրակեան, որու նախագահութեան շրջանին Սարգիս Տէմիրճեան որոշ ատեն ծառայած էր որպէս Կեդրոնական Վարչութեան անդամ եւ Փոխ-Նախագահ, խոր համակրանքով կը յիշէր իր բարեկամին եւ համաքաղաքացիին առատաձեռնութիւնը, անաղմուկ նուիրուածութիւնը եւ հեռատեսութիւնը: «Սարգիս խորապէս կ'ըմբռնէր համայնքի կարեւորութիւնը եւ երիտասարդութեան նկատմամբ հոգածութեան անհրաժեշտութիւնը: Այն պահերուն երբ Միութիւնը անմիջական տագնապներ դիմագրաւելու պարտադրանքին տակ չէր գտնուէր, Սարգիս Տէմիրճեան հեռանկարներ կը մշակէր եւ կը կառուցէր ապագային համար: Ըլլայ այդ ՀԲԸՄի Տէմիրճեան Կեդրոնը Լիբանանի մէջ, կամ աշխարհի միւս ծայրը Քալիֆորնիոյ մէջ ՀԲԸՄի Մանուկեան-Տէմիրճեան Վարժարանը, որուն հոգատարութիւնը ստանձնած էր: Երբ պատահեցաւ Պէյրութի նաւահանգիստի պայթումը, Սարգիս Տէմիրճեան առաջիններէն էր, որ հակազդեց արտակարգ առատաձեռնութեամբ եւ հոգածու ոգիով: Իր բարերարութեան շնորհիւ ՀԲԸՄը կրցաւ անմիջական օգնութիւն եւ երկարաժամկէտ հոգատարութիւն ապահովել ընտանիքներու, հաստատութիւններու եւ դպրոցներու, որոնք աղիտահար եղած էին: Մեր ամէնամուօ պահերուն, ան մեզ յուսադրեց վերյիշեցնելով միութեան զօրութիւնը եւ մեր ժողովուրդի տոկոսնութիւնը»:

Համաշխարհային Դրոշմ

Սարգիս Տեմիրճեանի հոգածութիւնը կը տարածուէր նաեւ Հայ Եկեղեցիին նկատմամբ: Ան հաւատաւոր հետեւորդ մըն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ: Ան նուիրուած էր հայ ազգի ինչպէս նաեւ լիբանանեան համայնքի հոգեւոր եւ մշակութային վերազարթօնքին, հովանաւորելով անթիւ երաժշտական փառատօներ եւ շրջանային տօնախմբութիւններ:

ՀԲԸՄԻ Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Ժէրար Թիւֆէնքճեան, իր ցաւակցագրին մէջ կ'արտայայտէր հանգուցեալը լաւագոյնս ճանչցած համայնքին զգացումները: «Ի յարգանք իր յիշատակին, մենք կը վերահաստատենք մեր յանձնառութիւնը այն իտէալներուն հանդէպ, զորոնք կը մարմնաւորէր Սարգիս Տեմիրճեան: Արժանապատուութիւն, ծառայութիւն եւ տեւական նուիրում հայ ժողովուրդին: Իր աւանդը պիտի շարունակէ գոյատեւել այն կառոյցներէն ներս որոնց թիկունք եղաւ ան, անոնց մօտ, որոնք յուսադրեց, նաեւ ապագայ յաջողութիւններուն մէջ հայ նոր սերունդին, որուն հանդէպ մեծ հաւատք

ունէր ան»:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը իր խորազգաց ցաւակցութիւնները կը փոխանցէ Սարգիս Տեմիրճեանի տիկնոջ Սեդային եւ Տեմիրճեան ընտանիքին, զաւակներուն՝ ՀԲԸՄԻ Կեդրոնական Վարչութեան անդամ Երուանդ Տեմիրճեանին եւ իր տիկնոջ Անի Շահպազեանին, ՀԲԸՄԻ Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի անդամ Թալին Պաշեանին եւ իր ամուսնոյն Րաֆֆին, ինչպէս նաեւ Ալէքս Տեմիրճեանին եւ իր տիկնոջ Էնն Ապի Ֆարահին: Իրենց հօր բազմաթիւ թոռներուն եւ ծոռներուն հետ, անոնք ջահակիրներն են Տեմիրճեան Ընտանիքի բարեսրտութեան եւ բարեգործութեան:

ՀԲԸՄը պատուեց Տէր եւ Տիկին Սարգիս եւ Սեդա Տեմիրճեանները 2019-ին Փարիզի մէջ կայացած Միութեան Ընդհանուր Ժողովին ընթացքին: Այդ առթիւ կազմակերպուած շքահանդէսին համար պատրաստուած յատուկ տեսահոլովակը կարելի է դիտել առցանց հետեւեալ հասցեով.

[Տեմիրճեաններու Պատուոյ Ձեռնարկ \(2019\)](#)

շար. էջ 8-էն →

ԱԼԻՆ ԳՈՒԹԱՆԻ ՀԱՄԵՐԳԸ

ցէն ներս, հասցնելով երգիչներու նոր սերունդներ:

2026-ի Փետրուարին տիկին Գուրան պիտի կատարէ Անա Սոքոլովիչի նոր՝ «Ծաղրածուները» օփերային համաշխարհային առաջին ելոյթը, Մոնրէալի Օփերային մէջ:

Ելոյթին դաշնամուրի վրայ կ'ընկերակցէր գանատացի դաշնակահար Մարթէն Տիւպէ, որ լաւագոյն ընկերակիցը կը համարուի Գանատայի մէջ եւ որ մարզիչ

դաշնակահար է Նիւ Եորքի երաժշտական Ճիւլերրտ Դպրոցէն ներս:

Յառաջիկայ Սեպտեմբերին Մարթէն Տիւպէ պիտի ստանձնէ Մոնրէալի Օփերային երգչային աշխատանոցի համագործակցային արուեստի ծրագրին ղեկավարութիւնը:

Իրապէս շատ գեղեցիկ համերգ մը, որուն տպաւորութիւնը դեռ երկա՛ր պիտի յամենայ եգիպտահայ հանդիսատեսին յիշողութեան մէջ:



ՄԱՀ ՏԻԳՐԱՆ ԾՈՒԼԻԿԵԱՆԻ (1931-2025)

Վերջերս՝ ընթացիկ տարւան Յուլիս ամսուան սկիզբը իր մահկանացուն կնքած է նախկին եգիպտահայ Տիգրան Ծուլիկեան, Երեւանի մէջ:

Ծուլիկեան ծնած է 1931-ին Գահիրէի մէջ, բնիկ կեսարացի Յարութիւն Արթին Ծուլիկեանի եւ Անժէլ Թէքէեան-Ծուլիկեանի յարկին տակ: 1935-1943 շրջանին յաճախեր է ֆրանսական թեքումով Մանիսալեան վարժարանը, ապա մինչեւ 1947 յաճախեր է անգլիական թեքումով Արարատեան գոլէճ, որմէ ետք ուսումը շարունակեր է Գահիրէի English Mission College-էն ներս, ուր հեռակայ քննութիւններ յանձնելով ստացեր է վկայագրեր Oxford & Cambridge համալսարաններէն:

1949-ին կ'ընդունուի Գահիրէի համալսարանի դեղագործութեան կաճառը, եւ 1954 թուականին կը վկայուի որպէս դեղագործութեան եւ դեղագործական բնագիտութեան մասնագէտ:

1964 թուականին Խորհրդային Հայաստան կը ներգաղթէ կնոջ՝ Արմինէ Սփէնճեանի հետ եւ կ'ունենայ երկու զաւակներ՝ Արմէն եւ Արամ:

Ուսումնասիրեր է Հայաստանի տակաւին չուսումնասիրուած դեղաբոյսերը: Ունի տպագրուած 4 աշխատանքներ:

1988-89 շրջանին, Սպիտակի աւերիչ երկրաշարժէն յետոյ, երբ մեծ քանակութեամբ դեղամիջոցներ որպէս օգնութիւն ուղարկուեցան տարբեր երկիրներէ, յատկապէս Ֆրանսայէն, մեծ եղաւ Տիգրան Ծուլիկեանի դերը այդ անձանօթ անուններով դեղերը Հայաստանի բժիշկներուն ծանօթացնելու աշխատանքին մէջ:

1992-2010 թուականներուն աշխատեր է Երեւանի Արարատեան Հայրապետական թեմի Առաջնորդարանը, որպէս «Ծնողազուրկ երեխաներու հովանաւորման գրասենեակ»ի տնօրէն: Այնտեղ արձանագրուած էին Երեւանի եւ շրջակայ հինգ



մարզերուն մէջ ապրող աւելի քան 12.000 որբ երեխաներ (այդ թիւը հասաւ մինչեւ 14.000-ի): Ծնորհիւ Հայ Առաքելական եկեղեցւոյ ԱՄՆ-ի Արեւելեան եւ Արեւմտեան, Աւստրալիայի եւ Եգիպտոսի թեմերու բարեպաշտ հաւատացեալներուն, հայ եւ օտար բարեգործական կազմակերպութիւններու եւ գթասիրտ անհատներու, գրասենեակը կրցեր է հովանաւորել

զոհուած ազատամարտիկներու, բազմազաւակ եւ միակողմանի ծնողազուրկ աւելի քան 10.000 որբ երեխաներ եւ արցախեան գոյամարտին մէջ զոհուած 2.500 ազատամարտիկներու զաւակներ:

2004-ին Տիգրան Ծուլիկեան պարգեւատրուեր է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի «Հայրապետական Օրհնութեան եւ գնահատանքի գիր»ով: 2011-ին պարգեւատրվեր է Հայ եկեղեցւոյ ԱՄՆ-ի Արեւելեան թեմի առաջնորդ՝ Տ. Խաժակ արք. Պարսամեանի «Օրհնութեան եւ գնահատանքի գիր»ով:

Այս աշխատանքներուն զուգահեռ, Ծուլիկեան զբաղեր է նաեւ հայերէնէ անգլերէն թարգմանչական աշխատանքներով: Թարգմաներ է բանասէր, բանահաւաք, ժողովրդագէտ, ազգագրագէտ, ցեղասպանագէտ դոկտ. պրոֆ. Վերժինէ Սվազլեանի աշխատանքները:

«The Armenian Genocide in the Memoirs and Turkish-language Songs of the Eyewitness-Survivors» (1999):

«The Armenian Genocide and the People's Historical Memory» (2005):

Այս գիրքը, որ բացի անգլերէնէ թարգմանուեր է նաեւ ռուսերէնի, ֆրանսերէնի, գերմաներէնի եւ թրքերէնի, բաժնուեր է Հայաստանի մէջ հաւատարմագրուած բոլոր օտարերկրեայ դեսպանատուններու պաշտօնատարներուն:

«Armenia»: In «The Greenwood Encyclopedia of World Folklore and Folklife» (2006, Greenwood Press, Westport,



Connecticut, London, Vol.2, pp 357-372):

«The Armenian Genocide-Testimonies of the Eyewitness-Survivors» (2011, Trasl. Tigran Tsulikian, Anahit Poghikian-Darbinian, 848 p.):

Այս մեծածաւալ հատորէն, որ հրատարակուած է երեք լեզուներով՝ հայերէն, անգլերէն եւ թրքերէն, օրինակ մը յանձնուեր է երեւան՝ (ա) Հռոմի Ֆրանսցիսկոս Պապին (անգլերէն), (բ) Ֆրանսայի նախագահ Նիգոլա Սարքոզիին (անգլերէն), (գ) յատուկ մակագրուած օրինակ մը Էլիզէի Պալատին, Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանտի համար, (դ) Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Ահմէտ Տա-

վուտօղլիին (թուրքերէն) եւ բազմաթիւ այլ անուանի մարդոց:

«The Heroic Battle of Moussa Dag: Testimonies of the Eyewitness Survivors» (2015):

«Relics of the Oral Tradition of the Armenians of Russia» (Rostov-on-Don and Pyatigorsk) (2020):

Թարգմաներ է նաեւ աւստրիաբնակ պատմաբան-բեմադրիչ Արտեմ Օհանջանեանի «1915. Irrefutable Evidence» հատորը:

Վերոյիշեալ եւ այլ աշխատանքներ տեղադրուած են «www.Fundamentalarmenology» կայքէջին մէջ:

ՍԱՐՈՒԽԱՆԻ ԱՐԽԻԻԸ «ԳԱԹ»Ի ՆՈՒԻՐՈՒԱԾ

1980-ական թուականներուն, երբ հալէպահայ մտաւորական ակնաբոյժ փոքր. Ռոպէր Ճէպէճեան Գահիրէ կու գար, կ'այցելէր նաեւ Ալեքսանդր Սարուխանի ընտանիքին եւ կը յորդորէր զիրենք Սարուխանի ամբողջ արխիւը ղրկել Երեւան եւ պահ տալ Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին:

Սարուխանի ընտանիքը անսալով այս յորդորին, կ'ուղարկէ արխիւը եւ կը ստանայ հետեւեալ նամակը Թանգարանի այն օրերու տնօրէն Աւիկ Իսահակեանէն:

Յարգարժան

Տէր եւ տիկին Կարօ եւ Սեդա Ներեսեան
Գահիրէ

Թանկագին բարեկամներ,

Մեծագոյն ուրախութեամբ ու խորին շնորհակալութեամբ, երկարատեւ սպասումից յետոյ, վերջապէս օրերս ստացանք սիրելի հայրիկի, մեծ ծաղրանկարիչ, թատերագիր եւ հրապարակախօս Ալեքսանդր Սարուխանի արխիւը, ամփոփուած 7 ստուար թղթէ տուփերի մէջ: Շուտով կը սկսուի դրան հաշուառումն ու գրանցումը, իսկ եկող տարեակիզբին՝ մշակման աշխատանքները: Ձեզ յայտնի պատճառներից բխող նախազգուշական նկատառումներով, ձեռնպահ ենք մնում արխիւի ստացման լուրը մամուլում հրապարակելուց:

Արխիւի մշակման աշխատանքները, ենթադրելով ծաւալից, կարող են տեւել երկու-երեք տարի, որից յետոյ այն կը դրուի գիտական շրջանառութեան՝ ի սպաս հայ արուեստագէտների ու գրականագէտների:

Շեշտելով ստացուած արխիւի կարեւորութիւնը հայ գրականութեան ու մշակոյթի պատմութեան ուսումնասիրման գործում, յայտնում ենք մեր խորին երախտագիտութիւնը, մաղթելով ձեզ եւ ձեր բոլոր հարազատներին քաջառողջութիւն, երջանկութիւն եւ ամենայն բարիք:

Յարգանքներով, Թանգարանի տնօրէն
(ստորագրութիւն)
Աւիկ Իսահակեան




ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

«ԽՈՐԵՆԱՑԻ»Ն ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ՄՏԱԽՈՐԱԿԱՆԻՆ

Հայաստանի վարչապետի միջնորդությամբ, Հանրապետության տօնին առիթով, մշակույթի զարգացման, ինչպես նաև հայապահպանության մեջ ներդրած նշանակալի աւանդի համար, Հայաստանի նախագահ Վահագն Խաչատրեանը սփիւռքահայ նշանավոր գրող, գրականագետ, փիլիսոփայ Գրիգոր Պլըտեանին (Ֆրանսա) պարգևատրեր է «Մովսէս Խորենացի» մետալով: Պարգևատրումին մասին հաղորդագրութիւնը տարածուել է նախագահին աշխատակազմին կողմէ:

Գրիգոր Պլըտեան ծնել է Լիբանան, 1945 թուականին:



ՀԱԱՐԷՑ ԵՒ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Հրեական ամենէն նշանավոր օրաթերթին՝ Հաարեցի խմբագիրը հանրային կերպով կը պախարակէ թրքական ժխտողական կեցուածքը հայոց ցեղասպանության հանդէպ, զայն պիտակելով «թրքական *հասպարա*»՝ պետական ծանուցողականութիւն:

Հասպարա, որ երբայերէն բացատրութիւն կը նշանակէ, կ'ակնարկէ պետական ծանուցողական մեքենային:

Հաարեցի խմբագիրը կ'ըսէ, թէ պետութիւնը կը խեղաթիւրէ պատմական տուեալները եւ կը փորձէ նոր, «խմբագրուած» պատմութիւն մը հրամցնել թէ՛ իր, թէ՛ օտար հանրության, չքմեղանալու համար միջազգային հանրության առջեւ:

Խմբագիրը կը յիշեցնէ 1915-ի հայերուն կրած սոսկալի տանջանքն ու մահը, եւ արդէն քանդումի եզրին հասած Օսմանեան բռնատիրութեան կողմէ ծրագրուած ցեղասպանութիւնը:

«Ինծի ծանօթ է պատմութիւնը մէկ ու կէս միլիոն հայերու, որոնք Անատոլիւն մինչեւ սուրիական անապատ քշուեցան, ընթացքին կողոպտուելով, բռնաբարուելով եւ ի վերջոյ սպաննուելով»:

Գրութիւնը վերջ կը գտնէ պախարակելով նաեւ Իսրայէլը, որ կը շարունակէ յամառօրէն չընդունիլ ցեղասպանութիւնը, պարզապէս չնեղացնելու համար Ատրպէյճանը, որ Թուրքիոյ հետ կարեւոր դաշնակից մըն է Իսրայէլի համար:

Նախագահ Րուվէն Րիվլինի խօսքով կ'աւարտի խմբագրին գրութիւնը:

«Ես, որպէս հրեայ իսրայէլացի, պարտականութիւն կը համարեմ ճանչնալ այլ ազգերու ողբերգութիւնները: Դիւանագիտական նկատառումները պէտք չէ արտօնեն մեզի ժխտել այլ ազգերու ողբերգութիւնը»:

Գեղամ Պալեան

500 ՔԱՐՏԷԶ

21 Մայիս 2025-ին Մոսկուայի մէջ տեղի ունեցեր է «Հայաստանի Պատմական Քարտեզագրութեան Ատլաս» հատորի շնորհանդէսը:

Հատորը կը պարփակէ Հայաստանի 500 քարտեզներ, սկսած Բաբելոնի հնագոյն շրջանէն, ներառելով Հայաստանի պատմական բոլոր ժամանակաշրջանները:



ՄՐ ԼՈՆՏՈՆ

ՀԲԸՄիության Լոնտոնի Երիտասարդ Արհեստավարժներու խումբը կազմակերպած էր ցուցադրական ձեռնարկ մը, որ լեցուն էր ստեղծագործութեամբ, գաղութին անդամներուն միջեւ ջերմ յարաբերութեամբ: Ցուցադրուած էին Մարգ Կիրակոսեան արուեստագէտին ժամանակակից գործերը, որ ներկայ էր ցուցադրութեան գաղութին տարբեր անդամներուն հետ հանդիպելու համար:

Ձեռնարկին ամբողջ հասոյթը պիտի տրամադրուի ՀԲԸՄ Արուեստ (AGBU ARTS) ծրագրին, սատարելու համար Սփիւռքի երիտասարդ հայ արուեստագէտներուն:



ՇՆՈՐՀԱՆԴԷՍ

22 Մայիս 2025-ին Լակրասենտա քաղաքի Միեր եւ Սաթիկ Տէր Օհաննէսեան կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 110-րդ տարելիցին նուիրուած «հայոց ցեղասպանութեան զոհ կանանց եւ երեխաներու փրկութեան գործը «տեղեկատու դիւանի» վաւերագրերուն մէջ. Զաւէն պատրիարքի ղեկոյցը ազգերու լիգային մէջ» (League of Nations) հատորին շնորհանդէսը:

Գիրքը աշխատասիրած են Լուսինէ Սահակեան, Անի Սարգսեան եւ Կորին եպս. Պաղտասարեան:

Բացառիկ տեղեկութիւններով եւ նոր մանրամասնութիւններով դասախօսած է Երեւանի Պետական Համալսարանի դոցենտ, թուրքագէտ Լուսինէ Սահակեան, ներկայացնելով Հայոց Ցեղասպանութեան զոհ հայ կանանց եւ որբերուն ճակատագիրը: Հանդիսութիւնը կատարել է Վաչէ Բրուտեանը:

Այս գիրքը կը ներկայացնէ 1918-ին Մուդրոսի զինադադարէն ետք Կ. Պոլսոյ մէջ Զաւէն Արք. Տէր-Եղիայեանի նախաձեռնութեամբ իրականացած որբահաւաքի աշխատանքները: Ուսումնասիրութեան համար հիմք են ծառայել են Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին մէջ պահուող «Տեղեկատու դիւանի» եւ այլ արխիւային վաւերագրերը:

Գիրքը հրատարակուել է Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի եւ ԵՊՀ Հայագիտական հետազոտութիւններու կաճառին համագործակցութեամբ:

Գիրքին հրատարակութեան մեկենասն է սաղիմահայ բարերար Յովսէփ Գէորգեանը: Նշենք նաեւ որ այս հատորին առաջին շնորհանդէսը տեղի ունեցել է Ապրիլի 25-ին, Երուսաղէմի Հայոց պատրիարքարանէն ներս:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ IQ

Համաշխարհային վերջին հետազոտութիւններուն համաձայն՝ Հայաստանը կը մտնէ աշխարհի ամենաբարձր միջին IQ ունեցող առաջին 10 երկիրներու շարքը՝ միջին մօտ 102.6 գումարով, հանդիսանալով աշխարհի Ցրդը:

Համեմատենք այս արդիւնքը աշխարհի ամենազարգացած եւ ամենէն հզօր պետութիւններուն արդիւնքներուն հետ.

Հայաստան – 102.6

Գերմանիա – 100.7

Իսրայէլ – 99.1

Միացեալ Թագաւորութիւն (Անգլիա) – 99.1



Ֆրանսա – 98.1

Ամերիկայի Միացեալ Նահանգներ – 97.4

Փոքր, սահմանափակ կարելիություններով եւ բնական հարստութեամբ, բայց պայքարի եւ մտքի հզօր ժառանգութիւն ունեցող հայ ժողովուրդը կը գերազանցէ աշխարհի հսկայ պետութիւններուն ինչպէս ԱՄՆ, Գերմանիա, Անգլիա, Ֆրանսա եւ Իսրայէլ:

Յակոբ Արզարեանի դիմապատկերան էջէն

ՍԱՄՈՒԷԼԵԱՆ ՀԱՒԱՔԱԾՈՅ

Փարիզի մէջ աճուրդի հանուած է Սամուէլեան արեւելագիտական ամբողջ հաւաքածոն: Այդ ովասիսի հոգեվարքին ականատեսը եղած եմ. փակումին նախորդող օրերուն տիկնոջս ու քենիիս հետ մտեր եմ հոն: Ամէն մէկս քանի մը գիրք զատեցինք ու երբ վճարել ուզեցինք, տէրը պնդեց, որ իբրեւ նուէր ընդունինք մեր գնելիքը: Երանի մտած չըլլայինք ու տխուր այս յուշը խնայուէր ինծի:

Փարիզահայ մտաւորականները մտահոգ են հիմա, որ ժողովածոն տրոհուի եւ անհետ չքանայ:

Ըստ իս հայագիտականքը մէկ կտոր պահելու է, միտք չունի ըսենք եգիպտագիտականքը վիրագիտականքին քով ամէն գնով պահելը:

Հայագիտական նիւթերն են որ պէտք է գնուին եւ – որ նոյնչափ կարելոր է – յարմար ու մատչելի տեղ մը պահուին: Յանդուգն երազս ալ յայտնի ընե՛մ, թե՛ չընեմ. նաեւ թուայնացուին:

Յաւերժական կնճիռ մը կայ սակայն, որ մեր ճակատը կը զարդարէ՝ գիրքի յարգը գիտցողը, մտաւորականը դրամ չունի, իսկ դրամ ունեցողը մշակոյթէն հեռու մէկն է, չըսելու համար՝ անոր թշնամին:

Ենովք Լազեանի դիմապատկերան էջէն

«ԶՄԵՌ ՄԱՐՏԻՆ»

Նադալիա Միրզոյեանի «Զմեռ Մարտին» քարթունգ կարճամեդրած ֆիլմը Գաննի փառատօնին պաշտօնական ընտրանի La Cinef-ի մէջ արժանացեր է երրորդ մրցանակի, որ կը ներկայացնէ եւ կը լուսաբանէ ֆիլմի դպրոցներուն գեղարուեստական եւ քարթունգ ֆիլմերը:

«ԶՄԵՌ ՄԱՐՏԻՆ»ը կը պատմէ բռնատէր պետութեան մը առջեւ անօգնական վիճակին մասին եւ հիմնուած է իրական դէպքերու վրայ:

Նատալիա Միրզոյեան Էստոնիա բնակող քարթունգի բեմադրիչ եւ նկարիչ է: Ծներ է Երեւան, Հայաստան: Ընկերաբանութիւն ուսաներ է Երեւանի համալսարանէն ներս, իսկ կրաֆիկական արուեստը՝ Սէնթ Փիթըրսպուրկի **դեկորատիվ** եւ կիրառական արուեստի կաճառէն ներս: Այժմ Էստոնիայի արուեստի ակադեմիայի ուսանող է: Միրզոյեանի բեմադրած ֆիլմերէն են «Իմ Մանկութեան Յանգաւոր Ծառը», «Չինտի», «Հինգ Րոպէ Դէպի Ծով», «Շնորհաւոր Տատիկներ»:

La Cinef-ին ներկայացուած էին 16 ուսանողական ֆիլմեր, որոնք ընտրուել էին աշխարհի 646 ֆիլմի դպրոցներէ մասնակցող 2679 ֆիլմերէն:

«ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 1991-2021 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ (ԱԿՆԱՐԿ)»


Ընթացիկ տարուան գարնան երեւանի Զանգակ հրատարակչատունէն լոյս տեսաւ Յովիկ Էօրտեքեանի «ՀԲԸՄիութեան Հայրենական Գործունէութիւնը 1991-2021 Տարիներուն (ակնարկ)» հատորը, որ նուիրուած է համահայկական մեծագոյն կառոյցներէն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (Հ.Բ.Ը.Մ.) 1991-2021 տարիներուն Հայաստանի մէջ ծաւալած բարեսիրական, առողջապահական, կրթական, եկեղեցաշինական, մշակութային, երիտասարդական եւ ընկերային-տնտեսական լայն գործունէութեան եւ գործադրած զանազան ծրագիրներուն:

Իր յառաջաբանին մէջ Յ. Էօրտեքեան կը գրէ.

«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պատմութեան նուիրուած բազմաթիւ գիրքեր, գիտական աշխատութիւններ, պատկերագիրքեր եւ յուշամատեններ կան, ուր լայնօրէն լուսաբանուած է Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ, Խ. Հայաստանի եւ ապա՝ Հայաստանի Հանրապետութեան տարածքին Միութեան ծաւալած ազգաշէն հսկայածաւալ գործունէութիւնը:

Յատկապէս Խ. Հայաստանի եւ Հայաստանի Հանրապետութեան տարիներուն Միութեան գործունէութիւնը պատշաճօրէն ներկայացուած է Վարդգէս Համազասպեանի եւ Էդուարդ Մելքոնեանի աշխատութիւններուն, ինչպէս նաեւ Յարութիւն Ռ. Գէորգեան-Վահէ Թաշճեանի համատեղ խմբագրուած պատմագիրքին մէջ, որոնց լոյս ընծայումէն անցած է գրեթէ երկու տասնամեակ:

Այդ թուականներէն ի վեր Բարեգործականը ոչ միայն շարունակած է իր աւանդական բարեսիրական ծրագիրներուն գործադրութիւնը Հայաստանի մէջ, այլ նաեւ զարգացնելով զանոնք, մարդասիրական, կրթական, մշակութային, եկեղեցաշինա-



կան, երիտասարդական ու մանաւանդ ընկերային-տնտեսական լայնածիր ասպարէզներ մուտք գործած է:

Անշուշտ տակաւին կանուխ է երեք տասնամեակներու վրայ տարածուող հայրենական գործունէութեան պատմագիտական արժեւորումը եւ գնահատումը կատարելու համար: Վստահ ենք հետագային շնորհալի պատմաբաններ պիտի անդրադառնան Պօղոս Նուպար Փաշայի եւ

անոր պայծառատես համախոհներուն հիմնած համահայկական այս կառոյցին հայաստանեան ծրագիրներուն, վերլուծեն, գնահատեն եւ արժանին մատուցեն այս ազգանպաստ գործունէութեան»:

Յ. Էօրտեքեան իր այս աշխատասիրութիւնը նուիրած է իր մօր՝ Արմէնուհի Զէյթունցեանի յիշատակին, «որ մանուկ տարիքիս, ձեռքէս բռնելով զիս տարած է Հալէպի Հ.Բ.Ը.Մ.ի վարժարան եւ Հ.Ե.Ը.ի ակումբ»:

360 էջերը բաժնուած են բազմաթիւ գլուխներու, որոնք մանրամասնօրէն կը ներկայացնեն ՀԲԸՄիութեան հայրենիքի մէջ տարած աշխատանքները:

Գիրքը հարստացած է նաեւ Մելքոնեան Հիմնադրամի Խորհրդային Հայաստանի մէջ կատարած հրատարակութիւններուն (թիւով 18 հատոր) եւ ՀԲԸՄիութեան Հայաստանի Հանրապետութեան մէջ կատարած հրատարակութիւններուն (թիւով 45, հայերէն եւ անգլերէն) ցանկերով, ՀԲԸՄիութեան Հայաստանի ներկայացուցչութեան պաշտօնէութեան անուանացանկով եւ ընդհանուր անուանացանկով մը (index):

Կարելոր աշխատութիւն մը, որ կ'ամփոփէ այս մեծ միութեան մեր հայրենիքին մէջ տարած աշխատանքները եւ կը դառնայ կարելոր աղբիւր մը ապագայի ուսումնասիրողներուն համար:



ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Ուրբաթ, 11 Յուլիս 2025-ին սկսաւ եգիպտահայ պասքէթ-պոլի տարեկան մրցաշարքերուն առաջինը՝ կազմակերպութեամբ Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻՆ: Այս տարուան խաղերէն կը բացակայէին աղջիկներու խումբերը, որուն պատճառաւ մրցաշարքը կորսնցուցած էր հետաքրքրական դառնալու ազդակներէն մէկը:

Ուրբաթ օրուան յայտագիրը սկսաւ հիւրընկալ ակումբին եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի խումբերուն միջեւ խաղով: Սկիզբէն Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ տղաքը տիրապետեցին խաղին, շփոթութեան մատնելով մրցակից խումբը: Երկրորդ քառորդախաղի աւարտին արդիւնքն էր 39-25, ի նպաստ իրենց: Այս տարի Կամքի խումբէն քանի մը խաղացողներ կը բացակայէին եւ այդ պատճառաւ իրենց խաղին մակարդակը անկումի ենթարկուած էր: Մրցումը աւարտեցաւ ի նպաստ հիւրընկալ խումբին, 61-34 արդիւնքով:

Նախքան օրուան երկրորդ մրցումին սկսիլը, ակումբի ժրաջան ու աշխոյժ ատենապետուհին՝ տիկին Անի Թիւթինճեան-Խայաթ խօսք առաւ: Ան շնորհակալութիւն յայտնեց Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի, բարեխնամ առաջնորդ Եգիպտոսի հայոց թեմին, որ իր բարձր հովանաւորութեամբ պատուած էր մրցա-

շարքը: Շնորհակալութիւն յայտնեց նաեւ Տէր եւ Տիկին Ժիրայր Տեփոյեանին, որոնք ստանձնած էին նախագահութեան պաշտօնը:

Ատենապետուհին գնահատանքի խօսք ըսաւ նախկին աղեքսանդրիահայ ու այժմ գանատաբնակ, Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ աղջիկներու պասքէթ-պոլի խումբին անդամ տիկին Լիւսի Տէտէանին, որ նուիրած էր տղոց բաժակը, եւ տիար Վարդ Ալեքսանեանին, որ նուիրած էր մրցաշարքին մետալները: Տիկին Անի յատուկ շնորհակալութիւն յայտնեց Հ.Բ.Ը.Մ.ի Շրջանակային Յանձնաժողովին, որ միշտ նեցուկ կը կանգնի ակումբին: Ան գնահատեց բոլոր խումբերը իրենց մասնակցութեան համար, քանզի առանց իրենց կարելի չէ մրցաշարք կազմակերպել: Ապա յոտնկայս յարգուեցաւ յիշատակը վերջերս կեանքէ հեռացած եգիպտահայերուն:

Օրուան երկրորդ մրցումը Հ.Մ.Ը.Մ. Արարատի եւ Սրբուհի Թերեզայի խումբերուն միջեւ էր: Արարատի 17 մարզիկներէ բաղկացած խումբին դիմաց Սրբուհի Թերեզայի 7 մարզիկները դաշտ իջան տաքնալու փորձեր ընելու: Երկրորդ քառորդախաղի աւարտին արդիւնքը 44-14 էր, ի նպաստ Արարատին:

Միակողմանի մրցումը աւարտեցաւ



Արարատի յաղթանակով, 71-51 արդիւնքով:

Շաբաթ օրուան յայտագրին վրայի միակ մրցումը ամենահետաքրքրականն էր՝ Գահիրէ Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի խումբերուն միջեւ: Երկու խումբերուն մարզիկները դաշտ իջան պրկուած ջիղերով: Սխալ անցումներ ու արձակումներ անպակաս էին խաղէն: Երկրորդ քառորդախաղի աւարտին Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ տղաքը քանի մը թիւի առաւելութիւն արձանագրած էին, արդիւնքը հասցնելով 41-36-ի, ի նպաստ իրենց: Երրորդ քառորդախաղը սիրտ-հատնում պատճառեց երկու խումբերուն համակիրներուն, նոյնիսկ անոնց, որոնք իրենց տան մէջ հանգիստ նստած հեռարձակումով կը հետեւէին խաղին: Սակայն, չորրորդ քառորդախաղին Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ տղաքը տիրապետեցին: Արագ ու յաջող խաղերով 10 թիւի տարբերութիւն մը բացին, յաղթանակը ապահովեցին ու մրցումը աւարտեցին 78-68 արդիւնքով ի նպաստ իրենց:

Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ վարչութիւնը ընթրիք-խրախճանք մը կազմակերպած էր ակումբին մէջ ու մրցումը աւարտելուն սեղան-աթոռ շարուեցան դաշտին վրայ: Ներկաներէն մեծ թիւով անդամներ, մանաւանդ մասնակցած խումբերուն մարզիկները, հաճելի երեկոյ մը վայելեցին, ճաշակելով ճոխ ազատ շքասեղանին ուտելիքները:

Կիրակի օրուան աւարտականը երկու



Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻներուն միջեւ էր. խաղը ընթացաւ խաղաղ ու բարեկամական մթնոլորտի մէջ, մանաւանդ որ Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ երկու մարզիկներ միացած էին Աղեքսանդրիոյ քոյր միութեան խումբին: Մրցումը աւարտեցաւ 76-50 արդիւնքով, ի նպաստ Գահիրէի խումբին:

Տիկին Լիւսի Տէտէեան բաժակը յանձնեց Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ խմբապետ Արամ Աբիկեանին:

Վարձքը կատար խումբին պատասխանատու տիար Ռուբէն Սիմոնեանին, օգնականներ Ժիրայր Սուլթանեանին եւ Արմէն Իրատեանին, այս յաղթանակին համար:

**Սօսի Ներերեան-Յակորեան
Յուլիս 2025**





Անդամական

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՀԲԸՄիության Գահիրէի Տեղեկան Մասնաճիւղի «Աղաթօն» գրադարանին ֆօթօ-ֆոնտը իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ օր. Ինկրիտ Եանըգեանին, որ իր ընտանեկան հին լուսանկարներէն թիւով 14 մեծ լուսանկար նուիրեց մեզի:

Այդ հաւաքածոյին մէջ, Եանըգեանի ծնողքին եւ մեծ ծնողքին նկարներուն կողքին, կան իրապէ՛ս պատմական նկարներ, ինչպէս Մանիսալեան Վարժարանի խմբանկար մը, Հայ Լեգէոնի Ենթասպաներուն զօրագրումէն, 1920-ին Ատանայի մէջ առնուած խմբանկար մը եւ Ս. Կարապետ Բարձրագոյն վարժարանի ուսումնաւարտներու գեղեցիկ խմբանկար մը, 1913 թուականին առնուած:

ՀԲԸՄիության Գահիրէի Տեղեկան Մասնաճիւղի «Աղաթօն» գրադարանը իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ տիկին Սիլվա Ներետեան-Բլատեանին, որ իր մեծ հօր՝ մեծանուն Ալ. Սարուխանի մասին գրուած գիրքերէն երեք անուն նուիրեց գրադարանիս:

1-«Ալեքսանդր Սարուխանի Արուեստը», Սաթենիկ Մելիքեան, հեղինակային հրատարակութիւն, հովանաւորութեամբ տիկին Սեդա Սարուխան-Ներետեանի, Երեւան, 2004, 60 էջ:

2-«Երգիծանկարիչ Ալեքսանդր Սարուխան», Եղուարդ Յակոբեան, հրատարակութիւն եւ տպագրութիւն Նուպար եւ Հրաչ Սիմոնեան Եղբայրներու, Գահիրէ, 1990, 16 էջ:

3-«Երգիծանկարիչ Ալեքսանդր Սարուխան», Եղուարդ Յակոբեան, հրատարակութիւն եւ տպագրութիւն Նուպար եւ Հրաչ Սիմոնեան Եղբայրներու, Գահիրէ, անթուակիր, 32 էջ:

Շնորհակալութեամբ ստացանք Բախչանեան ընտանիքէն 18 հատոր գիրք՝ հայերէն, անգլերէն եւ արաբերէն լեզուներով, «Աղաթօն» գրադարանին համար:

Շնորհակալութիւն Սօսի Ներետեան-Յակոբեանին, «Աղաթօն» գրադարանին նուիրած ութ գիրքերուն համար:

Շնորհակալութիւն Սոնիա Յակոբեանին, մեր երջանկայիշատակ Կաթողիկոսներու եւ Պատրիարքներու թիւով 22 լուսանկարներ «Աղաթօն» գրադարանի ֆօթօ-ֆոնտին նուիրելուն համար:

Լուսանկարները իրենց կոնակին թուագրուած են. կը պակսի թիւ 15-ը. դժբախտաբար թուական կամ լուսանկարիչի անուն չկայ:

Հաւաքածոյին մաս կը կազմեն Եղիշէ Վ. Դուրեանի, Մաղաքիա Օրմանեանի, Մկրտիչ Խրիմեանի (Հայրիկ), Մատթէոս Իզմիրլեանի, Խորէն Նար-Պէյի, Գէորգ Կաթողիկոսի, Մամբրէ Եպիսկոպոսի, Գարեգին Սրուանձտեանցի եւ այլ կրօնականներու թանկարժէք լուսանկարները:

